ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2013 թվականի դեկտեմբերի 12-ին

ՊԵՏԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Գ Լ ՈՒ Խ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան

1. Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում պետական նպաստների տրամադրման հետ կապված հարաբերությունները, սահմանում է պետական նպաստի հասկացությունը, տեսակները և տրամադրման կարգը:

Հոդված 2. Պետական նպաստի իրավունքը

1. ~~Պետական~~ Սույն օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում պետական նպաստի իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, Հայաստանի Հանրապետությունում բնակվող և բնակության իրավունք (կացության կարգավիճակ) ունեցող օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք (այսուհետ՝ քաղաքացի) ~~օրենքով սահմանված հիմքերի առկայության դեպքում~~ , եթե սույն օրենքով այլ բան նախատեսված չէ:

2. Հայաստանի Հանրապետության երկքաղաքացին պետական նպաստի իրավունք ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացուն հավասար, եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրով կամ սույն օրենքով այլ բան նախատեսված չէ:

Հոդված 3. Պետական նպաստների հասկացությունը և տրամադրման նպատակը

1. Պետական նպաստը պետական բյուջեի միջոցներից պարբերաբար կամ միանվագ տրամադրվող դրամական օգնություն է:

2. Պետական նպաստների տրամադրման նպատակն է՝

1) անապահով ընտանիքների կենսամակարդակի բարձրացմանն օժանդակելը կամ դրա վատթարացումը կանխելը.

2) ընտանիքի կամ քաղաքացու որոշակի ծախսերի մասնակի հատուցումը.

3) ժողովրդագրական իրավիճակի բարելավումը.
4) սոցիալական ապահովության իրավունքի իրականացումը:

Հոդված 4. Պետական նպաստների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը

1. Պետական նպաստների տրամադրման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են սույն օրենքով, իրավական այլ ակտերով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:

Հոդված 5. Պետական նպաստների տեսակները

1. Սույն օրենքով սահմանվում են պետական նպաստների հետևյալ տեսակները.
1) անապահովության նպաստը.
2) ***(կետն ուժը կորցրել է 24.10.24 ՀՕ-407-Ն)***
3) հրատապ օգնությունը.
4) երեխայի ծննդյան միանվագ նպաստը.
5) մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստը.
6) ժամանակավոր անաշխատունակության նպաստը.
6.1) մայրության նպաստը.
6.2) երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի նպաստը.
7) ծերության նպաստը.
8) հաշմանդամության նպաստը.
9) կերակրողին կորցնելու դեպքում նպաստը.
10) թաղման նպաստը~~.~~:
~~11) խնամակալության նպաստը:~~
2. Սույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված նպաստի տրամադրման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այլ օրենքներով:
(5-րդ հոդվածը լրաց. 01.12.14 ՀՕ-207-Ն, 04.03.20 ՀՕ-137-Ն, փոփ. 24.10.24 ՀՕ-407-Ն)
(24.10.24 ՀՕ-407-Ն օրենքն ունի անցումային դրույթներ)

Հոդված 5.1. Միասնական սոցիալական ծառայությունը

1. Միասնական սոցիալական ծառայությունը (օրենսդրությամբ սահմանված դեպքերում՝ նաև իր ստորաբաժանումների միջոցով) օրենսդրությամբ սահմանված դեպքերում նշանակում կամ վերահաշվարկում է սույն օրենքով սահմանված նպաստները, դադարեցնում է դրանք ստանալու իրավունքը, ապահովում է նշված նպաստների վճարումը կամ մերժում է նպաստներ նշանակելու, նշանակված նպաստները վերահաշվարկելու դիմումները:

(5.1-ին հոդվածը լրաց. 24.10.24 ՀՕ-426-Ն)

Հոդված 6. Պետական նպաստի տրամադրումը

1. Պետական նպաստ ստանալու համար քաղաքացին դիմում է Միասնական սոցիալական ծառայության՝ օրենսդրությամբ սահմանված տարածքային կենտրոն (այսուհետ՝ տարածքային կենտրոն):

2. Դիմողը հայտարարագրում է պետական նպաստի տվյալ տեսակի համար անհրաժեշտ տվյալները և ներկայացնում պահանջվող փաստաթղթերը:

3. ***(մասն ուժը կորցրել է 24.10.24 ՀՕ-426-Ն)***

4. Պետական նպաստների չափերը, դրանց նշանակման և վճարման կարգերը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

5. Սոցիալական աջակցության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը, քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինների գործունեության մեթոդական ղեկավարում ու վերահսկողություն իրականացնող մարմնի հետ համատեղ սահմանած կարգով, քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններից ստանում է պետական նպաստ նշանակելու (ընտանիքի սոցիալական գնահատման) համար անհրաժեշտ՝ Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական կացության ակտի պետական գրանցման վերաբերյալ տեղեկություններ:

(6-րդ հոդվածը փոփ. 01.12.14 ՀՕ-207-Ն, լրաց. 16.12.16 ՀՕ-223-Ն, փոփ. 06.12.17 ՀՕ-230-Ն, 24.10.24 ՀՕ-407-Ն, խմբ., փոփ. 24.10.24 ՀՕ-426-Ն)

(24.10.24 ՀՕ-407-Ն օրենքն ունի անցումային դրույթներ)

Հոդված 7. Պետական նպաստ նշանակելու մերժման հիմքերը

1. Պետական նպաստի նշանակումը մերժվում է՝

1) պետական նպաստի տվյալ տեսակի նշանակման համար օրենսդրությամբ սահմանված հիմք(եր)ի բացակայության,

2) դիմողի կողմից անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը օրենքով պետական նպաստի տվյալ տեսակի նշանակման համար սահմանված ժամկետում չներկայացնելու,

3) պետական նպաստ ստանալու համար դիմողի կողմից ոչ հավաստի կամ կեղծ տվյալներ ներկայացնելու դեպքերում:

(7-րդ հոդվածը փոփ., լրաց. 24.10.24 ՀՕ-407-Ն)

(24.10.24 ՀՕ-407-Ն օրենքն ունի անցումային դրույթներ)

Հոդված 8. Պետական նպաստների վճարման կազմակերպումը

1. Պետական նպաստները վճարվում են սոցիալական աջակցության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման

մարմնի հետ պետական նպաստների վճարման ծառայությունների մատուցման պայմանագիր կնքած և (կամ) Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած այլ կազմակերպությունների (այսուհետ՝ վճարող կազմակերպություն) միջոցով:

2. Պետական նպաստների վճարման ծառայություններ մատուցելու պայմանագրի օրինակելի ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

3. ***(մասն ուժը կորցրել է 07.12.22 ՀՕ-503-Ն)***

4. Սույն օրենքով սահմանված՝ չաշխատող անձի մայրության նպաստը և երեխայի ծննդյան միանվագ նպաստը վճարվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով այն անձի անվամբ բացված միանվագ դրամական վճարների հաշվին մուտքագրելու միջոցով, որին նշանակվել է նպաստը: Եթե միանվագ դրամական վճարների հաշիվ բացելու համար անհրաժեշտ տվյալները բանկին փոխանցելու ամսվանից հաշված՝ 12 ամսվա ընթացքում, անձը չի ներկայացնում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 928.8-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված պահանջը, ապա միանվագ դրամական վճարների հաշվին մուտքագրված նպաստի գումարը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 928.8-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով և ժամկետում վերադարձվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

5. Անապահովության նպաստը և հրատապ օգնությունը վճարվում են ~~անկանխիկ եղանակով, բացառությամբ սույն հոդվածի 7-րդ մասում նշված դեպքերի~~ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և եղանակով:

~~6. Անապահովության նպաստը և հրատապ օգնությունը, սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն, անկանխիկ եղանակով վճարվում են ընտանիքի միակ չափահաս անդամին կամ ընտանիքի չափահաս անդամին՝ ընտանիքի չափահաս մյուս բոլոր անդամների գրավոր համաձայնությամբ (եթե ընտանիքի կազմում կան մեկից ավելի չափահաս անդամներ):~~

~~7. Անապահովության նպաստը և հրատապ օգնությունը դիմումի հիման վրա վճարվում են անկանխիկ կամ կանխիկ եղանակով, եթե գումարը վճարվում է ընտանիքի չափահաս անդամին (ընտանիքի միակ չափահաս անդամին կամ ընտանիքի մյուս բոլոր չափահաս անդամների գրավոր համաձայնությամբ գումարը ստացող՝ ընտանիքի չափահաս անդամին), որը ֆունկցիոնալության խորը կամ ծանր աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող անձ է, կամ լրացել է նրա 75 տարին:~~

~~8. Անապահովության նպաստը և հրատապ օգնությունը կանխիկ եղանակով վճարելը անապահովության նպաստի կամ հրատապ օգնության գումարը ընտանիքի չափահաս անդամին վճարելն է:~~

~~9. Անապահովության նպաստն անկանխիկ եղանակով վճարելը գումարը ընտանիքի միակ չափահաս անդամի կամ սույն հոդվածի 6-րդ մասում նշված ձևով ընտանիքի չափահաս անդամների գրավոր համաձայնության մեջ նշված ընտանիքի չափահաս անդամի անվամբ (այսուհետ՝ սոցիալական ապահովության հաշվի տեր) Հայաստանի~~

~~Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով բացված սոցիալական ապահովության հաշվին փոխանցելն է:~~

~~10. Հրատապ օգնությունն անկանխիկ եղանակով վճարելը գումարը ընտանիքի միակ չափահաս անդամի կամ սույն հոդվածի 6-րդ մասում նշված ձևով ընտանիքի չափահաս անդամների գրավոր համաձայնության մեջ նշված ընտանիքի չափահաս անդամի անվամբ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով բացված միանվագ դրամական վճարների հաշվին փոխանցելն է:~~

(8-րդ հոդվածը լրաց. 06.12.17 ՀՕ-240-Ն, փոփ., լրաց. 07.12.22 ՀՕ-503-Ն, փոփ. 25.10.23 ՀՕ-327-Ն, փոփ., լրաց. 24.10.24 ՀՕ-407-Ն)

(07.12.22 ՀՕ-503-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

(24.10.24 ՀՕ-407-Ն օրենքն ունի անցումային դրույթներ)

Գ Լ ՈՒ Խ 2

ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԱՆԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

(գլուխն ուժը կորցրել է 06.12.17 ՀՕ-230-Ն)

Գ Լ ՈՒ Խ 3

(գլուխը խմբ. 24.10.24 ՀՕ-407-Ն)

(24.10.24 ՀՕ-407-Ն օրենքն ունի անցումային դրույթներ)

ԱՆԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏԸ

(վերնագիրը խմբ. 24.10.24 ՀՕ-407-Ն)

Հոդված 13. Անապահովության նպաստ ստանալու իրավունքը և անապահովության նպաստ տրամադրելու հիմքը

1. Անապահովության նպաստ ստանալու իրավունք ունի Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված՝ ընտանիքի անապահովության գնահատման կարգով (այսուհետ՝ Գնահատման կարգ) սոցիալապես անապահով ճանաչված այն ընտանիքը, որի մեկ հաշվարկային անդամի ամսական եկամտի չափը ցածր է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից տվյալ տարվա համար սահմանված՝ անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմից, և ընտանիքի համար հաշվարկված անապահովության նպաստի չափը բարձր է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից տվյալ տարվա համար սահմանված անապահովության նպաստի նվազագույն չափից:

2. Ընտանիքի մեկ հաշվարկային անդամի ամսական եկամուտը հաշվարկելու նպատակով ընտանիքի բոլոր անդամների՝ Գնահատման կարգով հաշվարկվող եկամուտների հանրագումարը բաժանվում է ընտանիքի անդամների հաշվարկային թվի վրա:

3. Ընտանիքի անդամների հաշվարկային թիվը ձևավորվում է սույն մասի 1-4-րդ կետերում նշված գործակիցների հիման վրա ստացված թվերը գումարելով.

1) 18 և ավելի տարեկան անձի գործակիցը՝ 1.

2) 15-17 տարեկան անձի գործակիցը՝ 0.7.

3) 10-14 տարեկան անձի գործակիցը՝ 0.55.

4) 0-9 տարեկան անձի գործակիցը՝ 0.45:

4. Անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմը սահմանվում է՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի՝ տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությունների տվյալներով նախորդ տարվա երրորդ եռամսյակի համար հաշվարկված և հրապարակված նվազագույն պարենային զամբյուղի արժեքի նկատմամբ հաշվարկված տոկոսը:

5. Անապահովության նպաստի նվազագույն չափը չի կարող ցածր լինել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի՝ տնային տնտեսությունների կենսապայմանների ամբողջացված հետազոտությունների տվյալներով նախորդ տարվա երրորդ եռամսյակի համար հաշվարկված և հրապարակված նվազագույն պարենային զամբյուղի արժեքի 10 տոկոսի արժեքից:

6. Անապահովության նպաստ ստանալու իրավունքը ծագում է անապահովության նպաստ նշանակելու օրվա դրությամբ, և անապահովության նպաստը վճարվում է դիմելու օրվա ամսվան հաջորդող ամսվանից մինչև նպաստի իրավունքի դադարեցման հիմքի առաջացումը, սակայն ոչ ավելի, քան 12 ամիս ժամկետով:

7. Անապահովության նպաստի նշանակումը մերժվում է սույն օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված դեպքերում, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով ընտանիքի անդամի՝ որպես աշխատանք փնտրող անձի կողմից հաշվառվելու համար դիմում չներկայացվելու կամ անապահովության նպաստ նշանակելու դիմումը, դրանում ներկայացված տվյալները կամ փաստաթղթերը օրենսդրությամբ սահմանված կարգին, պայմաններին կամ պահանջներին չհամապատասխանելու դեպքում:

Հոդված 14. Անապահովության նպաստ նշանակելու վարչական վարույթի առանձնահատկությունները

1. Անապահովության նպաստ նշանակելու վարչական վարույթը բաղկացած է դիմումի ներկայացման, օրենսդրությամբ սահմանված տվյալների հավաքման և վարչական ակտի կայացման փուլերից:

2. Անապահովության նպաստ նշանակելու նպատակով ընտանիքի չափահաս անդամներից մեկը՝ չափահաս մյուս անդամների գրավոր կամ էլեկտրոնային համաձայնությամբ, անհատական օգտահաշվի միջոցով առցանց ներկայացնում է Գնահատման կարգով հաստատված դիմում: Դիմումին կից ներկայացվում են անհրաժեշտ փաստաթղթերի բնօրինակների գունավոր լուսապատճեններ, որոնք հավաքվում են ընտանիքի էլեկտրոնային սոցիալական գործում:

3. Անապահովության նպաստ նշանակելու կամ մերժելու կամ անապահովության նպաստ ստանալու իրավունքը դադարեցնելու կամ անապահովության նպաստի չափի փոփոխման վերաբերյալ վարչական ակտն ընդունվում է ինքնաշխատ եղանակով ընտանիքի սոցիալական գնահատման և սոցիալական աջակցության տեղեկատվական ենթահամակարգում, որի արդյունքով ձևավորվում է էլեկտրոնային կարգադրություն (այսուհետ՝ Կարգադրություն)՝ վավերականության ստուգման նպատակով համապատասխան ծածկագրով, առանց ստորագրության՝ դիմումի ներկայացման պահից 30 օրվա ընթացքում: Դիմումի ներկայացման օր է համարվում օրենսդրությամբ սահմանված դիմումը և անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը ներկայացնելու օրը: Կարգադրության ընդունման համար հիմք են դիմողի առցանց ներկայացրած դիմումը և փաստաթղթերի բնօրինակների գունավոր լուսապատճենները, սոցիալական աջակցության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի, Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնին հասանելի այլ պետական կառավարման մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների ու կազմակերպությունների (համաձայնությամբ) տեղեկատվական շտեմարաններում առկա և օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված տվյալները, ինչպես նաև դիմողի կեցության պայմանների ուսումնասիրության նպատակով իրականացվող տնայցի արդյունքները:

4. Սույն օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետը լրանալու հիմքով անապահովության նպաստ ստանալու իրավունքը դադարեցվելու դեպքում առանձին կարգադրություն չի ձևավորվում:

5. Կարգադրությունն ուժի մեջ է մտնում ձևավորման պահից: Կարգադրությունը դիմողին տրամադրվում է ընտանիքի սոցիալական գնահատման և սոցիալական աջակցության տեղեկատվական ենթահամակարգում դիմողի անհատական օգտահաշվի միջոցով այն ձևավորվելու օրվա ընթացքում, իսկ դիմողի ցանկության դեպքում՝ նաև էլեկտրոնային փոստին կամ բջջային հեռախոսահամարին հաղորդագրություն ուղարկելու կամ տարածքային կենտրոնում առձեռն տրամադրելու միջոցով նման առցանց պահանջ ներկայացնելուց հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Կարգադրությանը համաձայն չլինելու դեպքում դիմողը կարող է այն բողոքարկել դատական կամ վարչական կարգով: Դատական կամ վարչական բողոքը կարող է ներկայացվել Կարգադրությունն ուժի մեջ մտնելուց հետո՝ 30 օրվա ընթացքում: Վարչական կարգով բողոքարկման դեպքում դիմողն առցանց ներկայացնում է բողոք Միասնական սոցիալական ծառայություն: Վարչական կարգով բողոքարկման արդյունքով վարչական ակտը կայացվում է դիմումն ստանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում: Վարչական կարգով բողոքարկման հիման վրա Կարգադրությունն ընդունվում է՝ հիմք ընդունելով սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված փաստաթղթերը (տվյալները), իսկ կայացված համապատասխան վարչական ակտը դիմողին տրամադրվում է սույն մասով սահմանված եղանակով ու ժամկետներում:

6. Վարչական բողոքի արդյունքով կայացվում է հետևյալ որոշումներից մեկը.

1) բավարարել բողոքը և ձևավորել նոր Կարգադրություն.
2) մերժել բողոքը՝ Կարգադրությունը թողնելով անփոփոխ:

Հոդված 15. Անապահովության նպաստի չափը որոշելը

1. Անապահովության նպաստի ամսական հիմնական չափը հաշվարկվում է՝ հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից տվյալ տարվա համար սահմանված՝ անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմի և ընտանիքի մեկ հաշվարկային անդամի ամսական եկամտի տարբերությունն ընտանիքի անդամների հաշվարկային թվով բազմապատկելու միջոցով:
2. Ընտանիքին վճարվում է հավելում՝ հիմք ընդունելով ընտանիքի խնամառության խումբը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված դեպքերում և չափով:
3. Ընտանիքի խնամառության խումբը որոշվում է՝ հիմք ընդունելով ընտանիքում խնամառուների թվի հարաբերությունն աշխատունակ անդամների թվին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով: Ընտանիքի խնամառության խումբը որոշելիս՝
1) ընտանիքի խնամառու անդամ են համարվում ընտանիքի մինչև 18 տարեկան կամ 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն կամ ֆունկցիոնալության ծանր կամ խորը սահմանափակումներ ունեցող կամ 75 և ավելի տարեկան անձինք, ինչպես նաև այլ անձինք Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ նախատեսված դեպքերում.
2) ընտանիքի աշխատունակ անդամ է համարվում 18 տարեկանից մինչև 62 տարեկանը ներառյալ 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն կամ ֆունկցիոնալության ծանր կամ խորը սահմանափակումներ չունեցող անձը:
4. Ընտանիքի աշխատունակ, բայց չաշխատող անդամներին վերագրվում է եկամուտ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ նախատեսված դեպքերում, չափով ու ժամկետներում: Եկամտի վերագրումն ընտանիքի անդամի համար հաշվարկվող եկամուտ է՝ անկախ այն փաստացի ստանալու հանգամանքից:

Հոդված 15.1 Անապահովության նպաստ ստանալու իրավունքի դադարեցման հիմքերը

1. Անապահովության նպաստ ստանալու իրավունքը դադարեցվում է՝
1) սույն օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերից որևէ մեկի վերացման դեպքում.
2) եթե պարզվում է, որ ընտանիքի որևէ անդամի համար ներկայացված՝ անապահովության նպաստ ստանալու իրավունքի որոշման համար հիմք հանդիսացող տվյալները (փաստաթղթերը) հավաստի չեն կամ կեղծ են.

3) սույն օրենքի 13-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետը լրանալու դեպքում.

4) ընտանիքի անդամի՝ պարտադիր կրթությունից դուրս մնալու դեպքում.

5) ընտանիքի միակ անդամի մահվան դեպքում.

6) անապահովության նպաստ ստանալու իրավունքից հրաժարվելու դեպքում.

7) ընտանիքի անդամի կողմից անշարժ գույքի գրավադրման դեպքում:

2. Անապահովության նպաստ ստանալու իրավունքը և անապահովության նպաստի վճարումը դադարեցվում են սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-7-րդ կետերում նշված հիմքերի հայտնաբերման օրվան հաջորդող ամսվա 1-ից, իսկ սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում նշված դեպքում՝ դրանց հայտնաբերման ամսվանից:

ԳԼՈՒԽ 4

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՊԱՍՏԸ

(գլուխն ուժը կորցրել է 24.10.24 ՀՕ-407-Ն)

(24.10.24 ՀՕ-407-Ն օրենքն ունի անցումային դրույթներ)

ԳԼՈՒԽ 5

ՀՐԱՏԱՊ ՕԳՆՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 18. Հրատապ օգնության տեսակները և տրամադրման հիմքերը

1. Հրատապ օգնության տեսակներն են՝

1) միանվագ հրատապ օգնությունը.

2) եռամսյա հրատապ օգնությունը:

2. Միանվագ հրատապ օգնությունը տրամադրվում է՝

1) ***(կետն ուժը կորցրել է 24.10.24 ՀՕ-407-Ն)***

2) ընտանիքում երեխայի առաջին դասարան ընդունվելու դեպքում.

3) ***(կետն ուժը կորցրել է 24.10.24 ՀՕ-407-Ն)***

3. Եռամսյա հրատապ օգնությունը տրամադրվում է անհետաձգելի լուծում պահանջող կյանքի դժվարին իրավիճակում:

(18-րդ հոդվածը փոփ. 24.10.24 ՀՕ-407-Ն)

(24.10.24 ՀՕ-407-Ն օրենքն ունի անցումային դրույթներ)

Հոդված 19. Երեխայի ծննդյան միանվագ հրատապ օգնության իրավունքը և դրա տրամադրման կարգը

(հոդվածն ուժը կորցրել է 24.10.24 ՀՕ-407-Ն)

(24.10.24 ՀՕ-407-Ն օրենքն ունի անցումային դրույթներ)

Հոդված 20. Երեխայի՝ առաջին դասարան ընդունվելու միանվագ հրատապ օգնության իրավունքը և դրա տրամադրման կարգը

1. Երեխայի՝ առաջին դասարան ընդունվելու միանվագ հրատապ օգնության իրավունք ունի դիմելու ամսվա դրությամբ անապահովության նպաստ ստանալու իրավունք ունեցող այն ընտանիքը, որի անչափահաս անդամներից մեկն ընդունվել է հանրակրթական ուսումնական հաստատության առաջին դասարան:

2. Երեխայի՝ առաջին դասարան ընդունվելու միանվագ հրատապ օգնություն ստանալու համար ընտանիքի չափահաս անդամներից մեկը տարածքային կենտրոն առցանց ներկայացնում է դիմում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով:

3. Երեխայի՝ առաջին դասարան ընդունվելու միանվագ հրատապ օգնությունը նշանակվում է, եթե ընտանիքի չափահաս անդամներից մեկը դիմել է երեխայի՝ առաջին դասարան ընդունվելու տարվա օգոստոս, սեպտեմբեր, հոկտեմբեր ամիսների ընթացքում, և ընտանիքը դիմելու ամսվա դրությամբ ունի անապահովության նպաստ ստանալու իրավունք:

4. Երեխայի՝ առաջին դասարան ընդունվելու միանվագ հրատապ օգնությունը նշանակվում է ընտանիքի՝ առաջին դասարան ընդունվող յուրաքանչյուր երեխայի համար:

5. Երեխայի առաջին դասարան ընդունվելու միանվագ հրատապ օգնությունը վճարվում է դիմելու ամսվան հաջորդող ամսվա ընթացքում:

(20-րդ հոդվածը լրաց. 01.12.14 ՀՕ-207-Ն, փոփ. 24.10.24 ՀՕ-407-Ն)

(24.10.24 ՀՕ-407-Ն օրենքն ունի անցումային դրույթներ)

Հոդված 21. Ընտանիքի անդամի մահվան դեպքում միանվագ հրատապ օգնության իրավունքը և դրա տրամադրման կարգը

(հոդվածն ուժը կորցրել է 24.10.24 ՀՕ-407-Ն)

(24.10.24 ՀՕ-407-Ն օրենքն ունի անցումային դրույթներ)

Հոդված 22. Եռամսյա հրատապ օգնություն ստանալու իրավունքը և եռամսյա հրատապ օգնություն տրամադրելու հիմքը

(վերնագիրը խմբ. 24.10.24 ՀՕ-407-Ն)

1. Եռամսյա հրատապ օգնություն ստանալու իրավունք ունի Գնահատման կարգով սոցիալապես անապահով ճանաչված, անապահովության նպաստ ստանալու իրավունք չունեցող այն ընտանիքը, որի մեկ հաշվարկային անդամի ամսական եկամտի չափը ցածր է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից տվյալ տարվա համար սահմանված՝ անապահովության նպաստ ստանալու իրավունք տվող սահմանային շեմի 130 տոկոսի արժեքից:

2. Եռամսյա հրատապ օգնություն ստանալու իրավունքը ծագում է եռամսյա հրատապ օգնությունը նշանակելու օրվա դրությամբ, և եռամսյա հրատապ օգնությունը վճարվում է դիմելու օրվա ամսվան հաջորդող ամսից մինչև եռամսյա հրատապ օգնության վճարման դադարեցման հիմքի առաջացումը, սակայն ոչ ավելի, քան երեք ամիս ժամկետով:

3. Եռամսյա հրատապ օգնությունը նշանակվում է անապահովության նպաստ նշանակելու համար սույն օրենքի 14-րդ հոդվածով սահմանված ընթացակարգերով:

4. Եռամսյա հրատապ օգնության նշանակումը մերժվում է սույն օրենքի 7-րդ հոդվածով նախատեսված դեպքերում, ինչպես նաև օրենսդրությամբ սահմանված դեպքերում և կարգով ընտանիքի անդամի՝ որպես աշխատանք փնտրող անձի կողմից հաշվառվելու համար դիմում չներկայացնելու, եռամսյա հրատապ օգնություն նշանակելու դիմումը, դրանում ներկայացված տվյալները կամ փաստաթղթերն օրենսդրությամբ սահմանված կարգին, պայմաններին կամ պահանջներին չհամապատասխանելու կամ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված՝ ընթացիկ տարվա մեջ եռամսյա հրատապ օգնություն նշանակելու պարբերականության քանակը լրանալու դեպքում:

(22-րդ հոդվածը փոփ. 06.12.17 ՀՕ-230-Ն, խմբ. 24.10.24 ՀՕ-407-Ն)

(24.10.24 ՀՕ-407-Ն օրենքն ունի անցումային դրույթներ)

Հոդված 23. Եռամսյա հրատապ օգնության վճարման դադարեցման հիմքերը

(վերնագիրը խմբ. 24.10.24 ՀՕ-407-Ն)

1. Եռամսյա հրատապ օգնություն ստանալու իրավունքը դադարեցվում է՝

1) սույն օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված հիմքերից որևէ մեկի վերացման դեպքում.

2) եթե պարզվում է, որ ընտանիքի կողմից ընտանիքի որևէ անդամի համար ներկայացված՝ եռամսյա հրատապ օգնություն ստանալու իրավունքի որոշման համար հիմք հանդիսացող տվյալները (փաստաթղթերը) հավաստի չեն կամ կեղծ են.

3) անապահովության նպաստ ստանալու իրավունք ձեռք բերելու դեպքում.

4) սույն օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասում նշված ժամկետը լրանալու դեպքում.

5) ընտանիքի միակ անդամի մահվան դեպքում.

6) եռամսյա հրատապ օգնություն ստանալու իրավունքից հրաժարվելու դեպքում.

7) ընտանիքի անդամի՝ պարտադիր կրթությունից դուրս մնալու դեպքում.

8) ընտանիքի անդամի կողմից անշարժ գույքի գրավադրման դեպքում:

2. Եռամսյա հրատապ օգնություն ստանալու իրավունքը և եռամսյա հրատապ օգնության վճարումը դադարեցվում են սույն հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-8-րդ կետերում նշված հիմքերի հայտնաբերման օրվան հաջորդող ամսվա 1-ից, իսկ սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում նշված դեպքում՝ դրանց հայտնաբերման ամսվանից:

3. Ընտանիքին ընթացիկ տարվա մեջ եռամսյա հրատապ օգնություն կարող է նշանակվել Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված պարբերականությամբ:

(23-րդ հոդվածը փոփ., լրաց. 01.12.14 ՀՕ-207-Ն, խմբ. 07.12.22 ՀՕ-503-Ն, 24.10.24 ՀՕ-407-Ն)

(07.12.22 ՀՕ-503-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

(24.10.24 ՀՕ-407-Ն օրենքն ունի անցումային դրույթներ)

Գ Լ ՈՒ Խ 5.1

(գլուխը լրաց. 01.12.14 ՀՕ-207-Ն, փոփ. 24.11.15 ՀՕ-144-Ն)

ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏԸ

Հոդված 23.1. Մայրության նպաստի իրավունքը

1. Մայրության նպաստի իրավունք ունեն՝

1) գործատուների հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող ֆիզիկական անձինք, բացառությամբ սույն մասի 3-րդ կետով սահմանված վարձու աշխատողի (այսուհետ՝ վարձու աշխատողներ).

2) անհատ ձեռնարկատերերը և նոտարները (այսուհետ՝ ինքնուրույնաբար իրենց աշխատանքով ապահոված անձինք).

3) Հայաստանի Հանրապետության բնակության վայրի հասցեով հաշվառված՝ հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու ժամանակահատվածի առաջին օրվա դրությամբ վարձու աշխատող կամ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձ չհանդիսացող անձը (այսուհետ՝ չաշխատող անձ): Սույն օրենքի 23.1-ին և 23.2-րդ հոդվածների իմաստով՝ չաշխատող անձ է համարվում նաև, բացառապես միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվող՝ անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձը, քաղաքացիաիրավական պայմանագրի հիման վրա աշխատանքների կատարման (ծառայությունների մատուցման) դիմաց գործատուից եկամուտ ստացող անձը, ինչպես նաև «Կամավոր աշխատանքի մասին» օրենքով սահմանված կարգով կամավոր աշխատանք կատարող կամավորը:

2. Վարձու աշխատողի, ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձի մայրության նպաստը նշանակելու և վճարելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով: «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով մայրության նպաստի իրավունք ունեցող (հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու ժամանակահատվածի առաջին օրվա դրությամբ վարձու աշխատող կամ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձ հանդիսացող) անձին սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի հիման վրա մայրության նպաստ չի նշանակվում:

3. Սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի իմաստով հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու ժամանակահատված է համարվում Հայաստանի

Հանրապետության աշխատանքային օրենսգրքով աշխատող կանանց համար սահմանված հղիության և ծննդաբերության արձակուրդի ժամանակահատվածը: Սույն հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված դեպքում հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու ժամանակահատվածը կազմում է 140 օր (70 օր հղիության, 70 օր ծննդաբերության):

4. Չաշխատող անձին մայրության նպաստ նշանակվում է, եթե նրա հղիության և ծննդաբերության (ժամանակավոր անաշխատունակության մեջ գտնվելու) վերաբերյալ տեղեկատվությունը (տվյալները) ստացվել է (են) հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու ժամանակահատվածի (140 օրվա) ընթացքում, ու հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու առաջին օրվա դրությամբ նա ունի Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով հաշվառում:

4.1. Հղիության և ծննդաբերության (ժամանակավոր անաշխատունակության մեջ գտնվելու) առաջին օրվա վերաբերյալ տեղեկատվությունը սույն հոդվածի 4-րդ մասում նշված կարգով ստանալուց հետո՝ մինչև մայրության նպաստ նշանակելը կամ վճարելը, անձի մահվան դեպքում նպաստը նշանակվում և վճարվում է, կամ նպաստը նշանակելուց հետո մահվան պատճառով չվճարված նպաստի գումարը վճարվում է մահացողի ընտանիքի անդամին (ամուսնուն, ծնողին, չափահաս զավակին, 14 տարեկան և դրանից բարձր տարիքի անչափահաս երեխային, Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալներով անձի մահվան օրվա դրությամբ նրա հետ բնակության նույն վայրում (հասցեում) համատեղ հաշվառված անձին)՝ դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը անձի մահվան օրվանից հետո՝ վեցամսյա ժամկետում, լիազոր մարմին ներկայացնելու դեպքում: Վեցամսյա ժամկետում չդիմելու դեպքում անձի մահվան պատճառով չվճարված նպաստի գումարը ենթակա է ժառանգման:

5. Օտարերկրյա քաղաքացի՝ չաշխատող անձին մայրության նպաստ նշանակվում է, եթե նա հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու ժամանակահատվածի առաջին օրվա դրությամբ առնվազն երեք տարի անընդմեջ հաշվառված է Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով:

(23.1-ին հոդվածը լրաց. 01.12.14 ՀՕ-207-Ն, 16.12.16 ՀՕ-223-Ն, խմբ., փոփ. 21.12.17 ՀՕ-288-Ն, խմբ. 25.06.19 ՀՕ-79-Ն, փոփ. 09.07.20 ՀՕ-360-Ն, լրաց. 14.06.23 ՀՕ-215-Ն, 22.11.23 ՀՕ-381-Ն, խմբ., լրաց. 27.03.25 ՀՕ-74-Ն)

(09.07.20 ՀՕ-360-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

(27.03.25 ՀՕ-74-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Հոդված 23.2. Մայրության նպաստը նշանակելը և վճարելը

1. Չաշխատող անձին (այդ թվում՝ սույն օրենքի 23.1-ին հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում նշված անձին), իսկ սույն օրենքի 23.1-ին հոդվածի 4.1-ին մասով սահմանված դեպքում՝ նրա ընտանիքի անդամին մայրության նպաստ նշանակվում է (անձը ձեռք է բերում մայրության նպաստ ստանալու իրավունք) մայրության նպաստի իրավունք

ունեցող անձի հղիության և ծննդաբերության (ժամանակավոր անաշխատունակության մեջ գտնվելու) վերաբերյալ տեղեկատվությունը (տվյալները) էլեկտրոնային առողջապահության համակարգից ստանալուց, իսկ սույն օրենքի 23.1-ին հոդվածի 4.1-ին մասում նշված դեպքում՝ դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը տարածքային կենտրոն ներկայացվելուց հետո՝ մեկամսյա ժամկետում:

1.1. Անձի հղիության և ծննդաբերության (ժամանակավոր անաշխատունակության մեջ գտնվելու) վերաբերյալ տեղեկատվությունը (տվյալները) էլեկտրոնային առողջապահության համակարգից ստացվում է (են) «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն:

2. Սույն օրենքի 23.1-ին հոդվածի 4.1-ին մասով սահմանված դեպքում մայրության նպաստ նշանակելու դիմումում ներառվող տվյալների կազմն ու բովանդակությունը, մայրության նպաստ նշանակելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

3. Չաշխատող անձին, իսկ սույն օրենքի 23.1-ին հոդվածի 4.1-ին մասով սահմանված դեպքում՝ նրա ընտանիքի անդամին մայրության նպաստ նշանակելու և վճարելու համար հիմք են՝

1) էլեկտրոնային առողջապահության համակարգում առկա տեղեկատվությունը (տվյալները)~~տվյալները~~՝ հղիության և ծննդաբերության (ժամանակավոր անաշխատունակության մեջ գտնվելու) վերաբերյալ.

2) «Եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված տեղեկատվական բազայում առկա տեղեկատվությունը (տվյալները)~~տվյալները~~՝ հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու առաջին օրվա դրությամբ չաշխատող անձ հանդիսանալու վերաբերյալ.

3) Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա տեղեկատվությունը (տվյալները)~~տվյալները~~՝ հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու առաջին օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության բնակության վայրի հասցեով հաշվառում ունենալու վերաբերյալ.

4) քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններից ստացված տեղեկատվությունը (տվյալները)~~տվյալները~~.

5) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դեպքերում՝ սույն օրենքի 23.1-ին հոդվածի 4.1-ին մասում նշված՝ մահացողի ընտանիքի անդամի ներկայացրած դիմումը և կից փաստաթղթերը:

4. Տարածքային կենտրոնը սույն օրենքի 23.1-ին հոդվածի 4.1-ին մասում նշված դեպքում մերժում է մայրության նպաստ նշանակելու դիմումը, եթե՝

1) դիմողը սույն օրենքի 23.1-ին հոդվածի 4.1-ին մասում նշված՝ մահացողի ընտանիքի անդամ չէ, կամ

2) դիմումին կից չեն ներկայացվել անհրաժեշտ փաստաթղթերը, կամ դիմումում չեն ներառվել անհրաժեշտ տվյալները, կամ

3) մահացած անձը, սույն օրենքի 23.1-ին հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն, չի ունեցել մայրության նպաստի իրավունք, կամ

4) մահացած անձի տվյալները չեն ստացվել սույն օրենքի 23.1-ին հոդվածի 4-րդ մասով սահմանված ժամկետում, կամ

5) չաշխատող անձը հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու առաջին օրվա դրությամբ չի ունեցել Հայաստանի Հանրապետության բնակության վայրի հասցեով հաշվառում, իսկ օտարերկրյա քաղաքացի՝ չաշխատող անձը հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու առաջին օրվա դրությամբ առնվազն երեք տարի անընդմեջ չի ունեցել Հայաստանի Հանրապետության բնակության վայրի հասցեով հաշվառում:

4.1. Սույն հոդվածով սահմանված կարգով մայրության նպաստը նշանակելու և վճարելու դեպքում լիազոր մարմինը հինգ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին պատշաճ ծանուցում է այն անձին, որի անվամբ մայրության նպաստի գումարը փոխանցվել է բանկ:

4.2. Սույն հոդվածով սահմանված կարգով մայրության նպաստ նշանակելը կամ վճարելը մերժելու դեպքում լիազոր մարմինը հինգ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին պատշաճ ծանուցում է դիմումը ներկայացնող անձին՝ նշելով մերժման հիմքը:

5. Չաշխատող անձի մայրության նպաստ ստանալու իրավունքը դադարում է սույն օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասում նշված դեպքում:

6. Չաշխատող փոխնակ (սուրոգատ) մորը մայրության նպաստ վճարվում է ընդհանուր հիմունքներով: Փոխնակ (սուրոգատ) մորից ծնված երեխայի՝ չաշխատող կենսաբանական մորը մայրության նպաստ չի վճարվում:

7. Հղիության 154-րդ օրը և 154 օրից հետո՝ մինչև հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու ժամանակահատվածի առաջին օրը, վաղաժամ ծննդաբերելու դեպքում չաշխատող անձին մայրության նպաստը տրվում է 70 օրվա՝ միայն ծննդաբերության արձակուրդի ժամանակահատվածի համար (ներառյալ, երբ երեխան ծնվել է մահացած):

8. Չաշխատող անձին տրվող մայրության նպաստի չափը հաշվարկելու համար հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու ժամանակահատվածի առաջին օրվա դրությամբ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված չափի հիսուն տոկոսը բաժանվում է 30.4-ի (մեկ ամսվա միջին օրերի թիվը) և բազմապատկվում 140-ով (հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու ժամանակահատվածի օրացուցային օրերի թվով), իսկ սույն հոդվածի 7-րդ մասում նշված դեպքում բազմապատկվում է 70-ով (ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու ժամանակահատվածի օրացուցային օրերի թվով):

9. Չաշխատող անձին տրվող մայրության նպաստը նշանակվում և վճարվում է «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» օրենքով

սահմանված կարգով ստեղծված ժամանակավոր անաշխատունակության նպաստ և մայրության նպաստ հաշվարկելու, նշանակելու, վճարելու համար տեղեկատվական շտեմարանով:

(23.2-րդ հոդվածը լրաց. 01.12.14 ՀՕ-207-Ն, լրաց., փոփ. 16.12.16 ՀՕ-223-Ն, խմբ. 06.12.17 ՀՕ-240-Ն, փոփ. 09.07.20 ՀՕ-360-Ն, լրաց. 22.11.23 ՀՕ-381-Ն, խմբ., լրաց., փոփ. 27.03.25 ՀՕ-74-Ն)

(09.07.20 ՀՕ-360-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

(27.03.25 ՀՕ-74-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Գ Լ ՈՒ Խ 6

ԵՐԵԽԱՅԻ ԾՆՆԴՅԱՆ ՄԻԱՆՎԱԳ ՆՊԱՍՏԸ

Հոդված 24. Երեխայի ծննդյան միանվագ նպաստի իրավունքը

1. ~~Երեխայի ծննդյան միանվագ նպաստի իրավունք ունեն երեխայի (որի ծննդյան կապակցությամբ ծագել է ծննդյան միանվագ նպաստի իրավունքը, այսուհետ՝ նոր ծնված երեխա) ծնողը, որդեգրողը կամ խնամակալը (այսուհետ՝ ծնող): Երեխայի ծննդյան միանվագ նպաստը նշանակվում և վճարվում է, եթե ծնողը և նոր ծնված երեխան հաշվառված են Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով, և եթե այլ բան նախատեսված չէ սույն հոդվածով:~~

1. Եթե այլ բան նախատեսված չէ սույն հոդվածով, երեխայի ծննդյան միանվագ նպաստի իրավունք ունեն երեխայի (որի ծննդյան կապակցությամբ ծագել է ծննդյան միանվագ նպաստի իրավունքը, այսուհետ՝ նոր ծնված երեխա) ծնողը, որդեգրողը կամ խնամակալը (այսուհետ՝ ծնող), եթե՝

1) ծնողը և նոր ծնված երեխան հաշվառված են Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով,

2) նոր ծնված երեխան չունի առանց ծնողական խնամքի մնացած երեխայի կարգավիճակ, բացառությամբ երեխայի խնամակալի (երբ երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակվում է երեխայի խնամակալին),

3) նոր ծնված երեխան չի գտնվում շուրջօրյա լրիվ խնամք տրամադրող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած հաստատություններում կամ կազմակերպություններում (այսուհետ՝ սոցիալական պաշտպանության հաստատություն),

4) նոր ծնված երեխայի՝ օտարերկրյա պետությունում ծնված լինելու դեպքում երեխայի ծննդի պետական գրանցումն իրականացրել է Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմինը, երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու համար դիմելու օրվա դրությամբ ծնողը և նոր ծնված երեխան գտնվում են Հայաստանի Հանրապետությունում,

5) նոր ծնված երեխայի՝ օտարերկրյա պետությունում ծնված լինելու դեպքում երեխայի ծննդի պետական գրանցումն իրականացրել է օտարերկրյա պետության իրավասու մարմինը, երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու համար դիմելու օրվա դրությամբ նոր ծնված երեխան Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, ծնողն ու նոր ծնված երեխան գտնվում են Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետությունում այդ երեխայի ծննդյան կապակցությամբ միանվագ նպաստ չի նշանակվել (վճարվել),

6) օտարերկրյա քաղաքացի ծնողը նոր ծնված երեխայի ծննդյան օրվա դրությամբ առնվազն երեք տարի անընդմեջ հաշվառված է Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով, երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու համար դիմելու օրվա դրությամբ ծնողը և նոր ծնված երեխան գտնվում են Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետությունում այդ երեխայի ծննդյան կապակցությամբ միանվագ նպաստ չի նշանակվել (վճարվել),

7) չի լրացել նոր ծնված երեխայի մեկ տարին:

~~1.1. Նոր ծնված երեխայի ծննդի պետական գրանցումն օտարերկրյա պետության իրավասու մարմնի կողմից իրականացված լինելու դեպքում երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակվում և վճարվում է ծնողին, եթե՝~~

~~1) ծնողը և նոր ծնված երեխան հաշվառված են Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով.~~

~~2) ծնողը և նոր ծնված երեխան դիմելու օրվա դրությամբ գտնվում են Հայաստանի Հանրապետությունում:~~

~~1.2. Օտարերկրյա քաղաքացի ծնողին երեխայի ծննդյան միանվագ նպաստը նշանակվում և վճարվում է, եթե՝~~

~~1) նոր ծնված երեխան հաշվառված է Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով.~~

~~2) ծնողը և նոր ծնված երեխան դիմելու օրվա դրությամբ գտնվում են Հայաստանի Հանրապետությունում.~~

~~3) նոր ծնված երեխայի ծննդյան օրվա դրությամբ ծնողն առնվազն երեք տարի անընդմեջ հաշվառված է Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով.~~

~~4) օտարերկրյա պետությունում երեխայի ծննդյան կապակցությամբ միանվագ նպաստ չի նշանակվել (վճարվել):~~

1.3. Օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմիններում դիվանագիտական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձին, նրա՝ օտարերկրյա պետությունում գտնվող ամուսնուն, Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող՝ դիվանագիտական ծառայության մարմիններում վարչատեխնիկական կամ սպասարկման անձնակազմում աշխատող անձին երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակվում է, եթե երեխայի ծննդի պետական գրանցումն իրականացրել է Հայաստանի Հանրապետության

դիվանագիտական ծառայության մարմինը: Այս դեպքում երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու համար դիմելու, նշանակելու և վճարելու առանձնահատկությունները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

2. Երեխայից հրաժարվելու, երեխային ~~բնակչության~~ սոցիալական պաշտպանության ~~կազմակերպությունում (մանկատանը)~~ հաստատությունում տեղավորելու, երեխայի որդեգրվելու կամ երեխայի՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխայի կարգավիճակ ձեռք բերելու դեպքում երեխայի ծնողը, բացառությամբ խնամակալի, կորցնում է երեխայի ծննդյան միանվագ նպաստի իրավունքը: Սույն հոդվածով սահմանված պայմանները բավարարելու դեպքում երեխայի խնամակալին երեխայի ծննդյան միանվագ նպաստը նշանակվում և վճարվում է անկախ երեխայի՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխայի կարգավիճակ ունենալու հանգամանքից:

3. ***(մասն ուժը կորցրել է 01.12.14 ՀՕ-207-Ն)***

4. Երեխայի ծննդյան միանվագ նպաստի չափը տարբերակվում է նոր ծնված երեխայի հերթական կարգաթվով՝ հաշվի առնելով նոր ծնված երեխայի ծնողների մյուս երեխաների և զավակների թիվը:

5. Նոր ծնված երեխայի հերթական կարգաթիվը որոշելու կարգը, նոր ծնված երեխայի հերթական կարգաթիվը որոշելու համար մյուս երեխաներին և զավակներին հաշվի առնելու պայմաններն ու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

6. Երեխայի ծննդյան միանվագ նպաստը նշանակվում է, եթե դիմումը ներկայացվել է նոր ծնված երեխայի ծննդյան ամսվանից հետո՝ 12 ամսվա ընթացքում:

7. Երեխայի ծննդյան միանվագ նպաստը նշանակվում է ծնված յուրաքանչյուր երեխայի համար:

8. Միաժամանակ մեկից ավելի երեխայի ծնվելու դեպքում, եթե, նոր ծնված երեխաների հերթական կարգաթվերից կախված, Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված են երեխայի ծննդյան միանվագ նպաստի տարբերակված չափեր, ապա նոր ծնված յուրաքանչյուր երեխայի ծննդյան միանվագ նպաստը նշանակվում և վճարվում է նոր ծնված երեխաներից ամենաբարձր կարգաթիվ ունեցող երեխայի համար սահմանված չափով:

9. Երեխայի ծննդյան միանվագ նպաստ ստանալու իրավունքը դադարում է՝

1) երեխայի ծննդյան միանվագ նպաստը վճարելու դեպքում.

1.1) երեխայի ծննդյան միանվագ նպաստի իրավունքը կորցնելու դեպքում:

2) ***(կետն ուժը կորցրել է 25.06.20 ՀՕ-340-Ն)***

10. Սույն օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասում նշված դեպքում երեխայի ծննդյան միանվագ նպաստը վճարվում է, եթե ծնողը կրկին դիմում է նպաստի գումարը Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վերադարձվելու ամսվան հաջորդող երեք տարվա ընթացքում:

(24-րդ հոդվածը փոփ., լրաց. 01.12.14 ՀՕ-207-Ն, խմբ., փոփ. 24.11.15 ՀՕ-144-Ն, լրաց., փոփ. 16.12.16 ՀՕ-223-Ն, խմբ. 06.12.17 ՀՕ-240-Ն, փոփ., լրաց. 25.06.20 ՀՕ-340-Ն, 25.10.23 ՀՕ-327-Ն)

Հոդված 24.1. Երեխայի ծննդյան միանվագ նպաստի իրավունքը

1. Եթե այլ բան նախատեսված չէ սույն հոդվածով, երեխայի ծննդյան միանվագ նպաստի իրավունք ունեն երեխայի (որի ծննդյան կապակցությամբ ծագել է ծննդյան միանվագ նպաստի իրավունքը, այսուհետ՝ նոր ծնված երեխա) ծնողը, որդեգրողը կամ խնամակալը (այսուհետ՝ ծնող), եթե՝

1) ծնողը և նոր ծնված երեխան հաշվառված են Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով,

2) նոր ծնված երեխան չունի առանց ծնողական խնամքի մնացած երեխայի կարգավիճակ, բացառությամբ երեխայի խնամակալի (երբ երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակվում է երեխայի խնամակալին),

3) նոր ծնված երեխան չի գտնվում սոցիալական պաշտպանության հաստատությունում,

4) նոր ծնված երեխայի՝ օտարերկրյա պետությունում ծնված լինելու դեպքում երեխայի ծննդի պետական գրանցումն իրականացրել է Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմինը, երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու համար դիմելու օրվա դրությամբ ծնողը և նոր ծնված երեխան գտնվում են Հայաստանի Հանրապետությունում,

5) նոր ծնված երեխայի՝ օտարերկրյա պետությունում ծնված լինելու դեպքում երեխայի ծննդի պետական գրանցումն իրականացրել է օտարերկրյա պետության իրավասու մարմինը, երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու համար դիմելու օրվա դրությամբ նոր ծնված երեխան Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, ծնողն ու նոր ծնված երեխան գտնվում են Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետությունում այդ երեխայի ծննդյան կապակցությամբ միանվագ նպաստ չի նշանակվել (վճարվել),

6) օտարերկրյա քաղաքացի ծնողը նոր ծնված երեխայի ծննդյան օրվա դրությամբ առնվազն երեք տարի անընդմեջ հաշվառված է Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով, երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու համար դիմելու օրվա դրությամբ ծնողը և նոր ծնված երեխան գտնվում են Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետությունում այդ երեխայի ծննդյան կապակցությամբ միանվագ նպաստ չի նշանակվել (վճարվել),

7) չի լրացել նոր ծնված երեխայի մեկ տարին:

2. Օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմիններում դիվանագիտական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձին, նրա՝ օտարերկրյա պետությունում գտնվող ամուսնուն, Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող՝ դիվանագիտական ծառայության մարմիններում վարչատեխնիկական կամ սպասարկման անձնակազմում աշխատող անձին երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակվում է, եթե երեխայի ծննդի պետական գրանցումն իրականացրել է Հայաստանի Հանրապետության

դիվանագիտական ծառայության մարմինը: Այս դեպքում երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու համար դիմելու, նշանակելու և վճարելու առանձնահատկությունները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

3. Երեխայից հրաժարվելու, երեխային սոցիալական պաշտպանության հաստատությունում տեղավորելու, երեխայի որդեգրվելու կամ երեխայի՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխայի կարգավիճակ ձեռք բերելու դեպքում երեխայի ծնողը, բացառությամբ խնամակալի, կորցնում է երեխայի ծննդյան միանվագ նպաստի իրավունքը: Սույն հոդվածով սահմանված պայմանները բավարարելու դեպքում երեխայի խնամակալին երեխայի ծննդյան միանվագ նպաստը նշանակվում և վճարվում է անկախ երեխայի՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխայի կարգավիճակ ունենալու հանգամանքից:

4. Միաժամանակ մեկից ավելի երեխայի ծնվելու դեպքում երեխայի ծննդյան միանվագ նպաստը նշանակվում է նոր ծնված յուրաքանչյուր երեխայի համար:

5. Երեխայի ծննդյան միանվագ նպաստ ստանալու իրավունքը դադարում է՝

1) երեխայի ծննդյան միանվագ նպաստը վճարելու դեպքում.

2) երեխայի ծննդյան միանվագ նպաստի իրավունքը կորցնելու դեպքում:

6. Սույն հոդվածի դրույթները կիրառվում են, երբ երեխան ծնվել է 2026 թվականի սեպտեմբերի 1-ին և դրանից հետո:

Հոդված 25. Երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելը և վճարելը

1. Երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու (երեխայի ծննդյան միանվագ նպաստ ստանալու իրավունք ձեռք բերելու) համար տարածքային կենտրոն են ներկայացվում դիմումը և Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դեպքերում՝ անհրաժեշտ փաստաթղթերը:

2. Երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու դիմումում ներառվող տվյալների կազմն ու բովանդակությունը~~, երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը (այդ թվում՝ երեխայի կարգաթիվը որոշելու համար անհրաժեշտ)~~ սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

3. ~~Երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելիս նոր ծնված երեխայի, նոր ծնված երեխայի ծնողների մյուս երեխաների և զավակների բնակության (հաշվառման) վայրը որոշվում է բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալների հիման վրա:~~

3. Երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու համար հիմք են ընդունվում՝

1) Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա տեղեկատվությունը (տվյալները)

2) քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններից ստացված տեղեկատվությունը (տվյալները)

3) Հայաստանի Հանրապետության սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգի տեղեկատվությունը (տվյալները)

4) լիազոր մարմնի կողմից վարվող շտեմարաններում առկա տեղեկատվությունը (տվյալները)

5) դիմումին կից ներկայացված փաստաթղթերը:

4. Տարածքային կենտրոնը 10 աշխատանքային օրվա ընթացքում ճշտում է ներկայացված տվյալների հավաստիությունը և որոշում է ընդունում՝ նշանակել երեխայի ծննդյան միանվագ նպաստ կամ մերժել նպաստի նշանակումը: Երեխայի ծննդյան միանվագ նպաստի նշանակումը մերժելու դեպքում հինգ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին գրավոր ծանուցվում է դիմողը:

5. Տարածքային կենտրոնը մերժում է նպաստ նշանակելը, եթե նոր ծնված երեխայի ծնողը չունի երեխայի ծննդյան միանվագ նպաստի իրավունք, կամ դիմումին կից չեն ներկայացվել անհրաժեշտ փաստաթղթերը (տվյալները):

6. ***(մասն ուժը կորցրել է 25.10.23 ՀՕ-327-Ն)***

7. ***(մասն ուժը կորցրել է 16.04.20 ՀՕ-229-Ն)***

8. ***(մասն ուժը կորցրել է 16.04.20 ՀՕ-229-Ն)***

9. Երեխայի ծննդյան միանվագ նպաստ նշանակելու և վճարելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը (տվյալները) լիազոր մարմնի կողմից վարվող շտեմարանների, Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրի և քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինների, Հայաստանի Հանրապետության սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգի միջև փոխանակելու կարգը, տեղեկատվության (տվյալների) կազմը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

(25-րդ հոդվածը լրաց. 01.12.14 ՀՕ-207-Ն, փոփ., խմբ. 24.11.15 ՀՕ-144-Ն, փոփ. 16.04.20 ՀՕ-229-Ն, 25.10.23 ՀՕ-327-Ն)

(16.04.20 ՀՕ-229-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Հոդված 26. Ընտանեկան դրամագլուխը (կապիտալը)

(հոդվածն ուժը կորցրել է 16.04.20 ՀՕ-229-Ն)

Գ Լ ՈՒ Խ 6.1

ԵՐՐՈՐԴ ԵՎ ՅՈՒՐԱՔԱՆՉՅՈՒՐ ՀԱՋՈՐԴ ԵՐԵԽԱՅԻ ՆՊԱՍՏԸ

Հոդված 26.1. Երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի նպաստի իրավունքը

1. Երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի նպաստի իրավունք ունեն ընտանիքում 3-րդ և յուրաքանչյուր հաջորդ նոր ծնված երեխայի (այսուհետ՝ շահառու

երեխա) ծնողներից մեկը կամ որդեգրողը (այսուհետ՝ ծնող), եթե նա Հայաստանի Հանրապետության քաղաքացի է և շահառու երեխան ու նրա կարգաթիվը որոշելու համար հաշվի առնված երեխաները՝

1) չունեն առանց ծնողական խնամքի մնացած երեխայի կարգավիճակ.

2) չեն գտնվում սոցիալական պաշտպանության հաստատությունում.

3) չի լրացել շահառու երեխայի վեց տարեկանը:

2. Օտարերկրյա պետությունում ծնված շահառու երեխայի ծնողն ունի երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի նպաստի իրավունք, եթե բավարարված են սույն հոդվածի 1-ին մասում նշված պայմանները և շահառու երեխայի ծննդի պետական գրանցումն իրականացրել է՝

1) Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմինը կամ

2) օտարերկրյա պետության իրավասու մարմինը, ընդ որում՝ երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի նպաստ նշանակելու համար դիմելու օրվա դրությամբ շահառու երեխան Հայաստանի Հանրապետության քաղաքացի է:

3. Նպաստ նշանակելուց հետո շահառու երեխայից հրաժարվելու, շահառու երեխային սոցիալական պաշտպանության հաստատությունում տեղավորելու, շահառու երեխայի որդեգրվելու կամ առանց ծնողական խնամքի մնացած երեխայի կարգավիճակ ձեռք բերելու դեպքում ծնողը կորցնում է երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի նպաստի իրավունքը:

4. Շահառու երեխայի կարգաթիվը որոշելու համար հաշվի առնված երեխայից հրաժարվելու, նրան սոցիալական պաշտպանության հաստատությունում տեղավորելու, որդեգրելու կամ առանց ծնողական խնամքի մնացած երեխայի կարգավիճակ ձեռք բերելու դեպքում ծնողը կորցնում երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի նպաստի իրավունքը, եթե նշված հանգամանքների հաշվառմամբ շահառու երեխայի կարգաթիվը 3-ից նվազում է:

5. Շահառու երեխայի կարգաթիվը որոշելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

6. Երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի նպաստ նշանակելու համար հիմք են ընդունվում՝

1) Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալները.

2) քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններից ստացված տվյալները՝

3) Հայաստանի Հանրապետության սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգի տվյալները՝

4) լիազոր մարմնի կողմից վարվող շտեմարանները,

5) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դեպքերում՝ ծնողի ներկայացրած փաստաթղթերը:

7. Երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի նպաստ նշանակելու և վճարելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը (տվյալները) լիազոր մարմնի կողմից վարվող շտեմարանների, Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրի և քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմինների, Հայաստանի Հանրապետության սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգի միջև փոխանակելու կարգը, տեղեկատվության (տվյալների) կազմը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 26.2. Երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի նպաստ նշանակելը և վճարելը

1. Շահառու երեխայի համար ծնողին նշանակվում և վճարվում է երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի նպաստ (ծնողը ձեռք է բերում երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի նպաստ ստանալու իրավունք), եթե ծնողը, շահառու երեխան, նրա կարգաթիվը որոշելու համար հաշվի առնված երեխաները և զավակները (բացառությամբ ռազմական ուսումնական հաստատությունում սովորող անձի, պարտադիր զինվորական

ծառայության զորակոչված կամ ազատազրկման վայրում պատիժը կրող անձի) Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում դիմելու օրվա դրությամբ հաշվառված են Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով և դիմելու օրվա դրությամբ ծնողը և շահառու երեխան գտնվում են Հայաստանի Հանրապետությունում:

2. Օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմիններում դիվանագիտական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձին, Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող՝ դիվանագիտական ծառայության մարմիններում վարչատեխնիկական կամ սպասարկման անձնակազմում աշխատող անձին երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի նպաստ նշանակվում է անկախ դիմելու օրվա դրությամբ ծնողի և շահառու երեխայի՝ Հայաստանի Հանրապետությունում գտնվելու հանգամանքից, եթե շահառու երեխայի ծննդի պետական գրանցումն իրականացրել է Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմինը: Այս դեպքում երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի նպաստ նշանակելու համար դիմելու, նշանակելու և վճարելու առանձնահատկությունները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

3. Միաժամանակ մեկից ավելի երեխա ծնվելու դեպքում, նոր ծնված շահառու երեխաներից յուրաքանչյուրին տրվում է ամենաբարձր կարգաթիվ ունեցող շահառու երեխայի կարգաթիվը: Այս դեպքում երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի նպաստի իրավունք ձեռք բերելիս նպաստը նշանակվում և վճարվում է յուրաքանչյուր շահառու երեխայի համար:

4. Երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի նպաստը նշանակվում և վճարվում է մինչև շահառու երեխայի վեց տարին լրանալու ամիսը՝ ներառյալ, բայց ոչ ավելի, քան մինչև երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի նպաստ ստանալու իրավունքը դադարելը:

5. Երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի նպաստը նշանակելու համար դիմումը և Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած անհրաժեշտ փաստաթղթերը (տվյալները) ներկայացվում են տարածքային կենտրոն: Սույն մասում նշված դիմումը ներկայացնելու կարգը, դիմումի հիման վրա նպաստ նշանակելու կամ մերժելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

6. Տարածքային կենտրոնը 10 աշխատանքային օրվա ընթացքում ճշտում է (այդ թվում՝ սույն օրենքի 26.1-ին հոդվածի 6-րդ մասով սահմանված տեղեկատվական շտեմարաններից ստացված տեղեկատվության (տվյալների) համադրմամբ) ներկայացված տվյալների հավաստիությունը և որոշում է ընդունում՝ նշանակել երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի նպաստ կամ մերժել նպաստի նշանակումը: Երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի նպաստի նշանակումը մերժելու դեպքում հինգ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին գրավոր ծանուցվում է դիմողը:

7. Տարածքային կենտրոնը մերժում է երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի նպաստ նշանակելը, եթե՝

1) ծնողը չունի երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի նպաստի իրավունք (չեն բավարարված սույն օրենքի 26.1-ին հոդվածի 1-ին մասով, իսկ շահառու երեխայի՝ օտարերկրյա պետությունում ծնված լինելու դեպքում՝ նաև սույն օրենքի 26.1-ին հոդվածի 2-րդ մասով սահմանված պայմանները) կամ

2) չեն ներկայացվել (չեն ստացվել) անհրաժեշտ փաստաթղթերը (տեղեկատվությունը (տվյալները)) կամ

3) ծնողը կամ շահառու երեխան կամ նրա կարգաթիվը որոշելու համար հաշվի առնված երեխաները և զավակները (բացառությամբ ռազմական ուսումնական հաստատությունում սովորող անձի, պարտադիր զինվորական ծառայության զորակոչված կամ ազատազրկման վայրում պատիժը կրող անձի) Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում դիմելու օրվա դրությամբ հաշվառված չեն Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով կամ

4) ծնողը կամ շահառու երեխան չի գտնվում Հայաստանի Հանրապետությունում կամ

5) տվյալ շահառու երեխայի համար նշանակվել է երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի նպաստ, և այդ նպաստ ստանալու իրավունքը դադարեցված չէ:

8. Երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի նպաստը նշանակվում է դիմումը ներկայացնելու ամսվան նախորդող 6-րդ ամսվա 1-ից, բայց սույն օրենքի 26.1-ին հոդվածի 1-ին մասով սահմանված պայմաններին, իսկ շահառու երեխայի՝ օտարերկրյա պետությունում ծնված լինելու դեպքում՝ նաև սույն օրենքի 26.1-ին հոդվածի 2-րդ մասով սահմանված պայմաններին բավարարելու ամսվան (այդ թվում՝ շահառու երեխայի ծննդյան ամսվան) հաջորդող ամսվա 1-ից ոչ շուտ:

9. Երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի նպաստի տվյալ ամսվա գումարը վճարվում է այդ ամսվա ընթացքում՝ անկանխիկ եղանակով, ծնողի անվամբ բանկում Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով բացված սոցիալական ապահովության հաշվին փոխանցելու միջոցով:

10. Երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի նպաստ ստանալու իրավունք ունեցող ծնողը նպաստի վճարումը շարունակելու համար պարտավոր է տարեկան առնվազն մեկ անգամ, վերջին անգամ բանկ ներկայանալու (երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի նպաստն անկանխիկ եղանակով ստանալու համար դիմելու) ամսվան հաջորդող տասներկուերորդ ամսվա վերջին աշխատանքային օրվանից ոչ ուշ, ներկայանալ բանկ և հայտարարություն ստորագրել Հայաստանի Հանրապետությունում լինելու մասին:

11. Երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի նպաստ ստանալու իրավունք ունեցող ծնողի՝ Հայաստանի Հանրապետությունում լինելու հանգամանքը բանկը կարող է հաստատել նաև առանց նրա բանկ ներկայանալու՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

12. Երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի նպաստ ստանալու իրավունք ունեցող ծնողի՝ Հայաստանի Հանրապետությունում լինելու հանգամանքը կարող է

հաստատվել տարածքային կենտրոնի կողմից՝ անձամբ ծնողի ներկայացրած գրավոր դիմումի հիման վրա կամ լիազոր մարմնի կողմից վարվող շտեմարաններում առկա կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պետական մարմնից ինքնաշխատ եղանակով ստացված տեղեկատվությամբ՝ այդ մարմնի հետ հարաբերություններում նշված հանգամանքն ի հայտ գալու դեպքում:

Հոդված 26.3. Երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի նպաստ ստանալու իրավունքը դադարեցնելը և վերականգնելը, երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի նպաստ վճարելը դադարեցնելը և վերսկսելը, չվճարված նպաստի գումարը վճարելը

1. Երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի նպաստ ստանալու իրավունքը դադարում է՝

1) շահառու երեխայի 6 տարեկանը լրանալու դեպքում.

2) Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալների համաձայն՝ շահառու երեխայի կամ ծնողի հաշվառումից դուրս գալու դեպքում.

3) Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալների համաձայն՝ շահառու երեխայի կամ ծնողի օտարերկրյա պետության բնակության վայրի հասցեով հաշվառվելու դեպքում.

4) ծնողի կամ երեխայի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարելու դեպքում.

5) երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի նպաստը 6 ամիս անընդմեջ չվճարելու դեպքում.

6) շահառու երեխայի՝ Հայաստանի Հանրապետությունից անընդմեջ 6 ամսից ավելի ժամկետով բացակայելու դեպքում

7) շահառու երեխայի կամ ծնողի մահվան դեպքերում.

8) երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի նպաստի իրավունքը կորցնելու դեպքում.

9) երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի նպաստ ստանալու իրավունքը դադարեցնելու մասին նոտարական կարգով վավերացված հայտարարությունը տարածքային կենտրոն ներկայացնելու կամ այդ գրավոր հայտարարությունը տարածքային կենտրոնում տալու դեպքում.

10) անձին սույն օրենքի խախտմամբ երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի նպաստ նշանակված լինելու դեպքում:

2. Երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի նպաստ ստանալու իրավունքը դադարեցվում է սույն հոդվածի 1-ին կետում նշված հանգամանքներն առաջանալու ամսին հաջորդող ամսվա 1-ից:

3. Երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի նպաստի վճարումը դադարեցվում է՝

1) ծնողի՝ երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի նպաստ ստանալու իրավունքը դադարելու դեպքում՝ ստանալու իրավունքը դադարելու օրվանից.

2) սույն օրենքի 26.2-րդ հոդվածի 10-րդ մասով սահմանված կարգով հայտարարությունը չստորագրելու կամ այդ հանգամանքը սույն օրենքի 26.2-րդ հոդվածի 11-12-րդ մասերով սահմանված կարգով չհաստատվելու դեպքում՝ սահմանված 12-ամսյա ժամկետը լրանալու ամսին հաջորդող ամսվա 1-ից:

4. Երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի նպաստ ստանալու իրավունքը վերականգնվում է՝

1) նպաստ ստանալու իրավունքը սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված հիմքերով դադարելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալների համաձայն՝ շահառու երեխայի կամ ծնողի կրկին Հայաստանի Հանրապետության բնակության վայրի հասցեով հաշվառվելու և գրավոր դիմելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության բնակության վայրի հասցեով հաշվառվելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից, եթե դիմումը

ներկայացվում է հաշվառվելու ամսվան հաջորդող 6 ամսվա ընթացքում, իսկ նշված ժամկետից հետո դիմելու դեպքում՝ դիմելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից.

2) նպաստ ստանալու իրավունքը սույն հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված հիմքով դադարելու դեպքում՝ գրավոր դիմելու դեպքում՝ դիմելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից.

3) նպաստ ստանալու իրավունքը սույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանված հիմքով դադարելու դեպքում՝ շահառու երեխայի՝ Հայաստանի Հանրապետություն վերադառնալու և ծնողի գրավոր դիմելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետություն վերադառնալու ամսվան հաջորդող ամսվա 1-ից, եթե դիմումը ներկայացվում է Հայաստանի Հանրապետություն վերադառնալու ամսվան հաջորդող 6 ամսվա ընթացքում, իսկ նշված ժամկետից հետո դիմելու դեպքում՝ դիմելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից.

4) ծնողի մահվան հիմքով դրամական աջակցություն ստանալու իրավունքը դադարեցնելու դեպքում՝ ծնողի մահվան ամսվան հաջորդող 6 ամսվա ընթացքում մյուս ծնողի կողմից գրավոր դիմելու դեպքում՝ ստանալու իրավունքը դադարեցնելու օրվանից, իսկ նշված ժամկետից հետո դիմելու դեպքում՝ դիմելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից.

5) նպաստ ստանալու իրավունքը սույն հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով սահմանված հիմքով դադարելու դեպքում՝ նպաստ ստանալու իրավունքը դադարելու ամսվան հաջորդող 6 ամսվա ընթացքում մյուս ծնողի գրավոր դիմելու դեպքում՝ ստանալու իրավունքը դադարեցնելու օրվանից, իսկ նշված ժամկետից հետո դիմելու դեպքում՝ դիմելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

5. Երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի նպաստ վճարելը վերսկսվում է՝

1) նպաստ ստանալու իրավունքը վերականգնվելու դեպքում՝ ծնողի՝ գրավոր դիմումը և անհրաժեշտ մյուս փաստաթղթերն անձամբ ներկայացնելու ամսին հաջորդող ամսվա 1-ից.

2) նպաստ վճարելը սույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի հիման վրա դադարեցված լինելու դեպքում՝ ծնողի՝ Հայաստանի Հանրապետությունում լինելու

վերաբերյալ տեղեկատվությունը բանկից ստանալու կամ լիազոր մարմնի կողմից վարվող շտեմարաններում առկա լինելու կամ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած պետական մարմնից ինքնաշխատ եղանակով ստանալու կամ տարածքային կենտրոն ծնողի անձամբ գրավոր դիմելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից, եթե նշված հանգամանքներն ի հայտ են եկել երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի նպաստ վճարելը դադարեցնելու ամսվանից սկսած՝ 6 ամսվա ընթացքում (մինչև 6-րդ ամսվա վերջին աշխատանքային օրը ներառյալ):

6. Երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի նպաստ ստանալու իրավունքը վերականգնվում է, և նպաստ վճարելը վերսկսվում է, եթե դիմելու օրվա դրությամբ՝

1) ծնողը և շահառու երեխան, ըստ Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալների, հաշվառված են Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեում և երեխան գտնվում է Հայաստանի Հանրապետությունում,

2) ծնողը և շահառու երեխան բավարարում են սույն օրենքի 26.1-ին հոդվածի 1-ին մասով սահմանված պայմաններին, իսկ շահառու երեխայի՝ օտարերկրյա պետությունում ծնված լինելու դեպքում՝ նաև սույն օրենքի 26.1-ին հոդվածի 2-րդ մասով սահմանված պայմաններին:

7. Սույն հոդվածի 4-րդ մասում նշված ժամկետները, այդ թվում՝ 6-ամսյա ժամկետը, կիրառվում են ոչ ավելի վաղ, քան ծնողի և շահառու երեխայի՝ սույն օրենքի 26.1-ին հոդվածի 1-ին մասով սահմանված պայմանները, իսկ շահառու երեխայի՝ օտարերկրյա պետությունում ծնված լինելու դեպքում՝ նաև սույն օրենքի 26.1-ին հոդվածի 2-րդ մասով սահմանված պայմանները բավարարելու օրվանից:

8. Եթե երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի նպաստ ստանալու իրավունքը դադարեցվել է սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ, 5-րդ և 6-րդ կետերով սահմանված հիմքերից որևէ մեկով, ապա նպաստը սույն օրենքով սահմանված կարգով կարող է նշանակվել նաև շահառու երեխայի մյուս ծնողին՝ ստանալու իրավունքը դադարեցնելու օրվանից, եթե դիմումը ներկայացվել է նպաստ ստանալու իրավունքը դադարելու

ամսվան հաջորդող 6 ամսվա ընթացքում, իսկ նշված ժամկետից հետո դիմելու դեպքում՝ դիմելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից: Սույն մասում նշված դեպքում ներկայացվում է նաև ծնողի (ում նպաստ ստանալու իրավունքը դադարեցվել է սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ, 3-րդ, 5-րդ և 6-րդ կետերով սահմանված հիմքերից որևէ մեկով)՝ երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի նպաստը մյուս ծնողին նշանակելու (վճարելու) համաձայնության մասին նոտարական կարգով վավերացված հայտարարությունը կամ այդ մասին տարածքային կենտրոնում վերջինս տված գրավոր հայտարարությունը:

9. Երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի նպաստ ստանալու իրավունքը դադարելու դեպքում, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքերի, նպաստ ստանալու իրավունքը չի վերականգնվում և նույն շահառու երեխայի համար երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի նպաստի իրավունք կրկին ձեռք բերելու դեպքում ծնողին նպաստ սույն օրենքով սահմանված կարգով նշանակվում և վճարվում է դիմելու և անհրաժեշտ փաստաթղթեր ներկայացնելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

10. Եթե երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի նպաստի վճարումը դադարեցվել է, ապա չվճարված նպաստի գումարը վճարվում է դիմելու կամ նպաստ վճարելը վերսկսելու (նպաստ ստանալու իրավունքը վերականգնելու) համար հիմք համարվող տեղեկատվությունն ստացվելու ամսվան նախորդող 6 ամսվա այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում ծնողը երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի նպաստ ստանալու իրավունք է ունեցել: Չվճարված նպաստի գումարը (այդ թվում՝ դիմելու կամ տեղեկատվությունը ստացվելու ամսվա գումարը) վճարվում է ծնողի դիմելու կամ նպաստ վճարելը վերսկսելու (նպաստ ստանալու իրավունքը վերականգնելու) համար հիմք համարվող տեղեկատվությունն ստացվելու ամսվան հաջորդ ամսվա նպաստի գումարի հետ:

11. Ծնողի մահվան պատճառով չվճարված երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի նպաստի գումարը վճարվում է ծնողի մահվան ամսվանից հաշված՝ նախորդող 6 ամսվա այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում նպաստ ստանալու իրավունքը դադարեցված չի եղել:

12. Ծնողի մահվան դեպքում չվճարված երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի նպաստի գումարը վճարվում է մյուս ծնողին կամ շահառու երեխայի 18 տարեկան և դրանից բարձր տարիքի քրոջը կամ եղբորը: Այդ գումարը վճարվում է, եթե դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը տարածքային կենտրոն են ներկայացվում ծնողի մահվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում: Վեցամսյա ժամկետում չդիմելու դեպքում ծնողի մահվան պատճառով չվճարված դրամական աջակցության գումարը ենթակա է ժառանգման:

Ծնողի մահվան դեպքում չվճարված երրորդ և յուրաքանչյուր հաջորդ երեխայի նպաստի գումարը նշանակելու և վճարելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Գ Լ ՈՒ Խ 7

ՄԻՆՉԵՎ ԵՐԿՈՒ ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՅԻ ԽՆԱՄՔԻ ՆՊԱՍՏԸ

(գլուխն ուժը կորցրել է 26.10.22 ՀՕ-392-Ն)

(26.10.22 ՀՕ-392-Ն օրենքն ունի եզրափակիչ մաս և անցումային դրույթներ)

Գ Լ ՈՒ Խ 7.1

ՄԻՆՉԵՎ ԵՐԿՈՒ ՏԱՐԵԿԱՆ ԵՐԵԽԱՅԻ ԽՆԱՄՔԻ ՆՊԱՍՏԸ

(գլուխը լրաց՝ 26.10.22 ՀՕ-392-Ն)

(26.10.22 ՀՕ-392-Ն օրենքն ունի եզրափակիչ մաս և անցումային դրույթներ)

Հոդված 28.2. Սույն գլխի դրույթների կիրառումը

1. Սույն գլխի դրույթները կիրառվում են, երբ երեխան ծնվել է 2023 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո:

Հոդված 28.3. Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի իրավունքը

1. Մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստի (այսուհետ՝ խնամքի նպաստ) իրավունք ունի երեխայի ծնողներից մեկը կամ որդեգրողը կամ խնամակալը (այսուհետ՝ ծնող), եթե՝

1) երեխան չունի առանց ծնողական խնամքի մնացած երեխայի կարգավիճակ, բացառությամբ երեխայի խնամակալի (երբ խնամքի նպաստ նշանակվում է երեխայի խնամակալին).

2) երեխան չի գտնվում ~~բնակչության սոցիալական պաշտպանության կազմակերպությունում (մանկատանը)~~ սոցիալական պաշտպանության հաստատությունում.

3) լրացել է երեխայի 70 օրականը, սակայն չի լրացել երեխայի երկու տարեկանը:

2. Օտարերկրյա քաղաքացի ծնողն ունի խնամքի նպաստի իրավունք, եթե բավարարում է սույն հոդվածով սահմանված պայմանները, և երեխայի ծննդյան օրվա դրությամբ ծնողն առնվազն երեք տարի անընդմեջ հաշվառված է Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով:

3. Եթե ծնողը խնամքի տակ ունի մեկից ավելի մինչև երկու տարեկան երեխա, ապա խնամքի նպաստը նշանակվում և վճարվում է յուրաքանչյուր երեխայի համար:

4. Խնամքի նպաստի չափը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝

1) Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով մինչև երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում (այսուհետ՝ խնամքի արձակուրդ) գտնվող ծնողի համար՝ տոկոսով՝ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով սահմանված չափի նկատմամբ.

2) խնամքի արձակուրդում չգտնվող ծնողի համար՝ խնամքի արձակուրդում գտնվող ծնողի համար սահմանված չափի 85 տոկոսը չգերազանցող չափով:

5. Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ գյուղական բնակավայրի հասցեով հաշվառված և փաստացի բնակվող, խնամքի արձակուրդում գտնվող ծնողին խնամքի նպաստը վճարվում է սույն հոդվածի 4-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված չափերով միաժամանակ, եթե վճարելու ամսվա 1-ի դրությամբ՝

1) առնվազն մեկ տարի անընդմեջ ծնողը հաշվառված է գյուղական բնակավայրի հասցեով, և

2) երեխան հաշվառված է գյուղական բնակավայրի հասցեով:

6. Խնամքի արձակուրդում գտնվող ծնողին խնամքի նպաստ նշանակելու (վճարելու) համար հիմք են «Եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված տեղեկատվական բազայի տվյալները ծնողի՝ խնամքի արձակուրդում գտնվելու վերաբերյալ: Խնամքի արձակուրդում գտնվող ծնողին վերաբերող տեղեկատվությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ որպես սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն սահմանված լինելու դեպքում խնամքի նպաստ նշանակելու առանձնահատկությունները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

(28.3-րդ հոդվածը խմբ., փոփ. 25.10.23 ՀՕ-327-Ն)

Հոդված 28.4. Խնամքի նպաստ նշանակելը և վճարելը

1. Խնամքի նպաստը նշանակվում և վճարվում է (ծնողը խնամքի նպաստ ստանալու իրավունք է ձեռք բերում), եթե ծնողը և երեխան Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում հաշվառված են Հայաստանի Հանրապետության բնակության վայրի հասցեով, և երեխան գտնվում է Հայաստանի Հանրապետությունում: Խնամքի նպաստը նշանակելու համար դիմումը և Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած անհրաժեշտ փաստաթղթերը (տվյալները) ներկայացվում են տարածքային կենտրոն:

1.1. Օտարերկրյա պետությունում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմիններում դիվանագիտական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձին, Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող՝ դիվանագիտական ծառայության մարմիններում վարչատեխնիկական կամ սպասարկման անձնակազմում աշխատող անձին խնամքի նպաստ նշանակվում է՝ անկախ դիմելու օրվա դրությամբ ծնողի և շահառու երեխայի՝ Հայաստանի Հանրապետությունում գտնվելու հանգամանքից, եթե երեխայի ծննդի պետական գրանցումն իրականացրել է Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ծառայության մարմինը: Այս դեպքում խնամքի նպաստ նշանակելու համար դիմելու, նշանակելու և վճարելու առանձնահատկությունները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

2. Խնամքի նպաստը նշանակվում է՝

1) երեխայի 70 օրականը լրանալու ամսվան հաջորդող ամսվա 1-ից (բայց խնամքի նպաստի իրավունք ձեռք բերելու ամսվա 1-ից ոչ շուտ), եթե դիմումն ու անհրաժեշտ փաստաթղթերը (տվյալները) ներկայացվել են երեխայի 70 օրականը լրանալու ամսվան հաջորդող տասներկու ամսվա ընթացքում.

2) դիմելու ամսվա 1-ից, եթե դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը (տվյալները) ներկայացվել են սույն մասի 1-ին կետում նշված տասներկուամսյա ժամկետը լրանալուց հետո:

3. Տվյալ ամսվա համար խնամքի նպաստը վճարվում է՝

1) սույն օրենքի 28.3-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով սահմանված չափով, եթե այդ ամսվա 1-ի դրությամբ ծնողը գտնվում է խնամքի արձակուրդում, սակայն չի հանդիսանում խնամքի արձակուրդում գտնվող գյուղաբնակ ծնող.

2) սույն օրենքի 28.3-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետով սահմանված չափով, եթե այդ ամսվա 1-ի դրությամբ ծնողը չի գտնվում խնամքի արձակուրդում.

3) սույն օրենքի 28.3-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված չափերով միաժամանակ, եթե այդ ամսվա 1-ի դրությամբ ծնողը բավարարում է սույն օրենքի 28.3-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված պայմանները (այսուհետ՝ խնամքի արձակուրդում գտնվող գյուղաբնակ ծնող):

4. Տվյալ ամսվա նպաստի չափը որոշվում է ինքնաշխատ եղանակով՝ հաշվի առնելով սույն հոդվածի 3-րդ մասը:

5. ***(մասն ուժը կորցրել է 25.10.23 ՀՕ-327-Ն)***

6. ***(մասն ուժը կորցրել է 25.10.23 ՀՕ-327-Ն)***

7. Մեկից ավելի գործատուների մոտ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի հիման վրա վարձու աշխատանք կատարող անձին խնամքի նպաստը նշանակվում է սույն օրենքի 28.3-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետով սահմանված չափով, իսկ խնամքի արձակուրդում գտնվող գյուղաբնակ ծնողին՝ սույն օրենքի 28.3-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված չափով, եթե այդ ամսվա 1-ի դրությամբ այդ գործատուներից որևէ մեկի մոտ ծնողը գտնվում է խնամքի արձակուրդում:

8. ***(մասն ուժը կորցրել է 25.10.23 ՀՕ-327-Ն)***

9. ***(մասն ուժը կորցրել է 25.10.23 ՀՕ-327-Ն)***

10. ***(մասն ուժը կորցրել է 25.10.23 ՀՕ-327-Ն)***

11. ***(մասն ուժը կորցրել է 25.10.23 ՀՕ-327-Ն)***

12. Խնամքի նպաստը նշանակվում և վճարվում է մինչև երեխայի երկու տարին լրանալը, բայց ոչ ավելի, քան մինչև խնամքի նպաստ ստանալու իրավունքը դադարելը:

13. ***(մասն ուժը կորցրել է 25.10.23 ՀՕ-327-Ն)***

14. ***(մասն ուժը կորցրել է 25.10.23 ՀՕ-327-Ն)***

15. ***(մասն ուժը կորցրել է 25.10.23 ՀՕ-327-Ն)***

16. ***(մասն ուժը կորցրել է 25.10.23 ՀՕ-327-Ն)***

17. Սույն հոդվածի 1-ին մասում նշված դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը (տվյալները) ներկայացվելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, տարածքային կենտրոնը ճշտում է ներկայացված տվյալների հավաստիությունը և որոշում է ընդունում նշանակել խնամքի նպաստ կամ մերժել խնամքի նպաստի նշանակումը: Ընդունած որոշման, իսկ խնամքի նպաստի նշանակումը մերժելու դեպքում նաև մերժման հիմքերի վերաբերյալ հինգ աշխատանքային օրվա ընթացքում տարածքային կենտրոնը ծանուցում է դիմումում նշված էլեկտրոնային փոստի հասցեով:

18. Տարածքային կենտրոնը մերժում է խնամքի նպաստ նշանակելը, եթե՝

1) ծնողը չունի խնամքի նպաստի իրավունք (չի բավարարում սույն օրենքի 28.3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում նշված պայմանները) կամ

2) չեն ներկայացվել անհրաժեշտ փաստաթղթերը (տվյալները) կամ

3) ծնողը կամ երեխան հաշվառված չէ Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով կամ

4) երեխան չի գտնվում Հայաստանի Հանրապետությունում կամ

5) տվյալ երեխայի խնամքի կապակցությամբ նշանակվել է խնամքի նպաստ, և խնամքի նպաստ ստանալու իրավունքը դադարեցված չէ:

19. ~~Յուրաքանչյուր ամսվա խնամքի նպաստը վճարվում է տվյալ ամսվա ընթացքում՝ անկանխիկ եղանակով: Եթե ծնողը ֆունկցիոնալության խորը կամ ծանր աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող անձ է, ապա խնամքի նպաստը վճարվում է անկանխիկ կամ կանխիկ եղանակով՝ ծնողի դիմումի հիման վրա:~~

Յուրաքանչյուր ամսվա խնամքի նպաստը վճարվում է տվյալ ամսվա ընթացքում՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով և եղանակով:

~~20. Խնամքի նպաստը կանխիկ եղանակով վճարելը գումարի տրամադրումն է անձամբ ծնողին կամ նրա փոխարեն խնամքի նպաստը ստանալու՝ օրենքով այդ իրավունքն ունեցող անձին:~~

~~21. Խնամքի նպաստը կանխիկ եղանակով վճարվում է նաև ծնողի տված և նոտարի վավերացրած լիազորագրով, եթե լիազորագրով խնամքի նպաստը վճարելու մասին գրավոր դիմումը և լիազորագիրը ներկայացվում են տարածքային բաժին կենտրոն:~~

~~22. Խնամքի նպաստը լիազորագրով անընդմեջ կարող է վճարվել տասներկու ամսից ոչ ավելի ժամանակահատվածում՝ սկսած խնամքի նպաստը լիազորագրով վճարելու ամսից, բայց ոչ ավելի, քան լիազորագրի գործողությունը դադարելը: Վերալիազորման կարգով տրված լիազորագրով խնամքի նպաստ չի վճարվում:~~

~~23. Լիազորագիրը տալու ամսվան հաջորդող տասներկուերորդ ամսվանից հետո խնամքի նպաստը տվյալ լիազորագրով չի վճարվում:~~

24. ~~Խնամքի նպաստն անկանխիկ եղանակով վճարելը նպաստի գումարը ծնողի անվամբ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով բացված սոցիալական ապահովության հաշվին փոխանցելն է:~~ Խնամքի նպաստ նշանակելը մերժելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, իսկ խնամքի նպաստ նշանակելու դիմումում ներառվող տվյալների կազմն ու բովանդակությունը, խնամքի նպաստ նշանակելու և վճարելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանում է սոցիալական աջակցության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը:

(28.4-րդ հոդվածը փոփ. 07.12.22 ՀՕ-503-Ն, խմբ., փոփ., լրաց. 25.10.23 ՀՕ-327-Ն)

(07.12.22 ՀՕ-503-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Հոդված 28.5. Խնամքի նպաստ ստանալու իրավունքը դադարեցնելը և վերականգնելը, խնամքի նպաստ վճարելը դադարեցնելը և վերսկսելը, չվճարված խնամքի նպաստի գումարը վճարելը

1. Խնամքի նպաստ ստանալու իրավունքը դադարում է՝

1) երեխայի երկու տարեկանը լրանալու դեպքում.

2) երեխայի՝ ~~բնակչության սոցիալական պաշտպանության կազմակերպություն~~ սոցիալական պաշտպանության հաստատություն-ընդունվելու կամ առանց ծնողական խնամքի մնացած երեխայի կարգավիճակ ձեռք բերելու դեպքում.

3) անձին Հայաստանի Հանրապետության օրենքի խախտմամբ խնամքի նպաստ նշանակված լինելու դեպքում.

4) Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալների համաձայն՝ երեխայի կամ ծնողի՝ օտարերկրյա պետության բնակության վայրի հասցեով հաշվառվելու դեպքում.

5) Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող ծնողի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարելու դեպքում.

6) օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող կամ փախստականի կարգավիճակ ունեցող ծնողի՝ Հայաստանի Հանրապետությունում բնակվելու իրավունքի ժամկետը լրանալու կամ բնակվելու իրավունքը դադարելու կամ Հայաստանի Հանրապետության բնակության վայրի (հասցեի) հաշվառումից դուրս գալու դեպքում.

7) երեխայի կամ ծնողի մահվան դեպքում.

8) երեխայի՝ Հայաստանի Հանրապետությունից անընդմեջ տասներկու ամիս և ավելի ժամկետով բացակայելու դեպքում.

9) ծնողի՝ խնամքի նպաստ ստանալու իրավունքը դադարեցնելու մասին նոտարական կարգով վավերացված հայտարարությունը տարածքային ~~բաժին~~ կենտրոն ներկայացնելու կամ այդ գրավոր հայտարարությունը տարածքային ~~բաժնում~~ կենտրոնում տալու դեպքում:

2. Խնամքի նպաստ ստանալու իրավունքը դադարում է սույն հոդվածի 1-ին մասով սահմանված համապատասխան հանգամանքն առաջանալու (հայտնաբերվելու) օրվան հաջորդող ամսվա 1-ից:

3. Խնամքի նպաստ վճարելը դադարեցվում է՝

1) ծնողի՝ խնամքի նպաստ ստանալու իրավունքը դադարելու դեպքում՝ խնամքի նպաստ ստանալու իրավունքը դադարելու օրվանից.

2) խնամքի նպաստը լիազորագրով վճարվելու դեպքում (ներկայացվել է խնամքի նպաստը լիազորագրով վճարելու դիմում)՝ լիազորագրի գործողության ժամկետը լրանալու ամսվան հաջորդող ամսվա 1-ից կամ լիազորագիրը տալու ամսվան հաջորդող տասներկուերորդ ամսվանից հետո՝ այդ ժամկետը լրանալու օրվան հաջորդող ամսվա 1-ից.

3) ծնողին կամ նրա լիազորած անձին տասներկու ամիս անընդմեջ խնամքի նպաստ չվճարելու դեպքում՝ տասներկուերորդ ամիսը լրանալու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

4. Ծնողի մահվան դեպքում երեխայի մյուս ծնողին նշանակվում է խնամքի նպաստ, եթե այդ ծնողն ունի խնամքի նպաստի իրավունք: Այս դեպքում սույն օրենքի 28.4-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված տասներկուամսյա ժամկետները կիրառվում են ծնողի մահվան ամսվանից:

5. Խնամքի նպաստ ստանալու իրավունքը դադարելու դեպքում խնամքի նպաստ ստանալու իրավունքը չի վերականգնվում: Այս դեպքում նույն երեխայի համար խնամքի նպաստի իրավունք կրկին ձեռք բերելու դեպքում խնամքի նպաստ նշանակվում է դիմելու և անհրաժեշտ փաստաթղթեր ներկայացնելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից:

6. Խնամքի նպաստը վճարելը վերսկսվում է սույն հոդվածի 3-րդ մասի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված հիմքերով դադարեցվելու դեպքում՝ խնամքի նպաստ վճարելը վերսկսելու դիմումի հիման վրա, դիմումը ներկայացնելու հաջորդ ամսվա 1-ից:

7. Խնամքի նպաստ վճարելը վերսկսվում է, եթե ծնողը դիմելու օրվա դրությամբ ունի խնամքի նպաստի իրավունք:

8. Չվճարված խնամքի նպաստի գումարը վճարվում է դիմելու ամսվան հաջորդող ամսվա խնամքի նպաստի գումարի հետ մինչև սույն օրենքով սահմանված կարգով խնամքի նպաստ վճարելը դադարեցնելը: Եթե խնամքի նպաստ վճարելը դադարեցվել է, ապա չվճարված խնամքի նպաստի գումարը վճարվում է դիմումի հիման վրա՝ դիմումը ներկայացնելու ամսվան նախորդող ամբողջ ժամանակահատվածի այն ամիսների համար, որոնց ընթացքում անձն ունեցել է խնամքի նպաստ ստանալու իրավունք: Խնամքի նպաստ վճարելը վերսկսելու դեպքում չվճարված խնամքի նպաստի գումարը (այդ թվում՝ դիմելու ամսվա խնամքի նպաստի գումարը) վճարվում է միանվագ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետում: Չվճարված նպաստի գումարը նախորդող ժամանակահատվածի ամիսների համար վճարվում է սույն օրենքի 28.4-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված չափով:

9. Խնամքի նպաստ ստանալու իրավունքը դադարեցնելուց հետո չվճարված խնամքի նպաստի գումարը վճարվում է ծնողի դիմումի հիման վրա, դիմումը մինչև երեխայի երեք տարեկանը լրանալը ներկայացնելու դեպքում՝ անկանխիկ եղանակով, դիմելու ամսվան հաջորդող ամսվա ընթացքում:

10. Նշանակված, սակայն ծնողի մահվան պատճառով չվճարված խնամքի նպաստի գումարը վճարվում է երեխայի օրինական ներկայացուցչին (ծնողին, խնամակալին, որդեգրողին), եթե խնամքի նպաստն ստանալու համար երեխայի օրինական ներկայացուցիչը դիմել է խնամքի նպաստի իրավունք ունեցող ծնողի մահվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում: Վեցամսյա ժամկետում չդիմելու դեպքում ծնողի մահվան պատճառով չվճարված խնամքի նպաստի գումարը ենթակա է ժառանգման:

11. Խնամքի նպաստ ստանալու իրավունքը դադարեցնելու, վերականգնելու, խնամքի նպաստ վճարելը դադարեցնելու, վերսկսելու և չվճարված խնամքի նպաստը վճարելու պայմաններն ու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը, իսկ համապատասխան դիմումին կից ներկայացվող անհրաժեշտ փաստաթղթերի (տվյալների) ցանկը՝ սոցիալական աջակցության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը:

(28.5-րդ հոդվածը լրաց., փոփ. 25.10.23 ՀՕ-327-Ն)

Գ Լ ՈՒ Խ 8

ԾԵՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏԸ, ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏԸ, ԿԵՐԱԿՐՈՂԻՆ ԿՈՐՑՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ՆՊԱՍՏԸ

Հոդված 29. Ծերության նպաստի իրավունքը

1. Ծերության նպաստի իրավունք ունի կենսաթոշակ ստանալու իրավունք չունեցող անձը՝ 65 տարին լրանալու դեպքում:

2. Ծերության նպաստի իրավունք ունեցող անձը նպաստ նշանակելու համար կարող է դիմել ցանկացած ժամանակ՝ իր հայեցողությամբ:

3. Ծերության նպաստը նշանակվում է ցմահ:

Հոդված 30. Հաշմանդամության նպաստի իրավունքը

1. Հաշմանդամության նպաստը նշանակվում է կենսաթոշակ ստանալու իրավունք չունեցող հաշմանդամություն ունեցող անձին, ինչպես նաև հաշմանդամություն ունեցող երեխա ճանաչված անձին:

2. Հաշմանդամության նպաստը սահմանվում է հաշմանդամության ամբողջ ժամանակահատվածի համար:

3. Սույն հոդվածի դրույթները չեն տարածվում «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքի համաձայն հատուցում ստանալու իրավունք ունեցող (շահառու հանդիսացող) անձանց վրա, եթե հաշմանդամություն ունեցող անձ է ճանաչվել հատուցման դեպքի հիմքով: «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքի համաձայն՝ սույն մասում նշված հիմքով նշանակված հատուցման գումարի վճարումը դադարեցնելուց հետո սույն մասում նշված անձինք ձեռք են բերում սույն հոդվածով սահմանված նպաստի իրավունք:

(30-րդ հոդվածը լրաց. 04.05.22 ՀՕ-114-Ն, փոփ. 08.12.22 ՀՕ-529-Ն)

(08.12.22 ՀՕ-529-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Հոդված 31. Կերակրողին կորցնելու դեպքում նպաստի իրավունքը

1. Կերակրողին կորցնելու դեպքում նպաստի իրավունք ունի մահացած կերակրողի՝ կենսաթոշակ ստանալու իրավունք չունեցող՝

1) 18 տարին չլրացած երեխան՝ մինչև 18 տարին լրանալը.

2) առկա ցերեկային ուսուցմամբ սովորող զավակը՝ մինչև 26 տարին լրանալը.

3) ամուսինը կամ օրենքով սահմանված կարգով խնամակալ ճանաչված անձը՝ եթե նա զբաղված է մահացած կերակրողի 14 տարին չլրացած՝ սույն հոդվածով նպաստի իրավունք ունեցող երեխայի խնամքով, ըստ Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալների՝ նրա հետ հաշվառված է նույն բնակության վայրում (հասցեում) և չի աշխատում:

2. Կերակրողին կորցնելու դեպքում նպաստը նշանակվում է կերակրողին կորցնելու դեպքում նպաստի իրավունք ունենալու ամբողջ ժամանակահատվածի համար:

3. Կերակրողին կորցնելու դեպքում նպաստ ստացող անչափահասն այդ իրավունքը պահպանում է նաև որդեգրվելու դեպքում:

4. Խորթ որդին և խորթ դուստրը կերակրողին կորցնելու դեպքում նպաստի իրավունք ունեն հարազատ որդուն և հարազատ դստերը հավասար:

5. Կերակրողին կորցնելու դեպքում նպաստի իրավունք ունեն նաև մահացած ճանաչված անձի ընտանիքի՝ սույն հոդվածում նշված անդամները: Մահացած ճանաչված

անձի ընտանիքի անդամներին կերակրողին կորցնելու դեպքում նպաստ նշանակելիս այդ անձի մահվան օր է համարվում դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռում նշված մահվան օրը, իսկ եթե դատարանի վճռում նշված չէ անձի մահվան օրը, ապա նրան մահացած ճանաչելու մասին դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրը:

6. Սույն հոդվածի դրույթները չեն տարածվում «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքի համաձայն հատուցում ստանալու իրավունք ունեցող (շահառու հանդիսացող) անձանց վրա, եթե կերակրողի զոհվելը (մահանալը) հատուցման դեպք է համարվում: «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքի համաձայն՝ սույն մասում նշված հիմքով նշանակված հատուցման գումարի վճարումը դադարեցնելուց հետո սույն մասում նշված անձինք ձեռք են բերում սույն հոդվածով սահմանված կենսաթոշակի իրավունք:

(31-րդ հոդվածը փոփ., խմբ., լրաց. 01.12.14 ՀՕ-207-Ն, փոփ. 16.04.20 ՀՕ-218-Ն, լրաց. 04.05.22 ՀՕ-114-Ն)

(հոդվածը 11.09.25 ՀՕ-308-Ն օրենքի փոփոխության մասով ուժի մեջ է մտնում 2026 թվականի սեպտեմբերի 1-ից)

Հոդված 32. Ծերության նպաստ, հաշմանդամության նպաստ, կերակրողին կորցնելու դեպքում նպաստ ստանալու իրավունքը, նպաստը նշանակելը և վճարելը

1. Սույն օրենքի 29-31-րդ հոդվածներով սահմանված նպաստի իրավունք ունեցող անձը նպաստ ստանալու իրավունք ունի, եթե Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով դիմել է տարածքային կենտրոն, և նրան նշանակվել է ծերության նպաստ, հաշմանդամության նպաստ կամ կերակրողին կորցնելու դեպքում նպաստ (այսուհետ՝ նաև նպաստառու):

2. Ծերության նպաստը, հաշմանդամության նպաստը կամ կերակրողին կորցնելու դեպքում նպաստը այդ նպաստի իրավունք ունեցող անձի, իսկ անչափահասի կամ խնամակալության տակ գտնվող անձի դեպքում՝ նրա օրինական ներկայացուցչի (ծնողի, որդեգրողի կամ խնամակալի) գրավոր դիմումի հիման վրա նշանակում է տարածքային կենտրոնը՝ ըստ նպաստի իրավունք ունեցող անձի՝ Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեի (Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա): Դիմումին կից ներկայացվում են նպաստ նշանակելու համար անհրաժեշտ փաստաթղթերը (տվյալները): Դիմումում ներառվող տվյալների կազմն ու բովանդակությունը, անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

3. Սույն հոդվածի 2-րդ մասում նշված դիմումը ներկայացվում է անձամբ:

4. Տարածքային կենտրոնը 10 աշխատանքային օրվա ընթացքում ճշտում է ներկայացված տվյալների հավաստիությունը և որոշում է ընդունում՝ նշանակել սույն

հոդվածով սահմանված նպաստը կամ մերժել նպաստի նշանակումը: Նպաստի նշանակումը մերժելու դեպքում հինգ աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին գրավոր ծանուցվում է դիմողը:

5. Տարածքային կենտրոնը մերժում է նպաստ նշանակելը, եթե դիմողը չունի նպաստի իրավունք կամ դիմումին կից չի ներկայացրել անհրաժեշտ փաստաթղթերը:

6. ~~Բնակչության սոցիալական պաշտպանության պետական~~ Սոցիալական պաշտպանության հաստատությունում ~~-~~բնակվող անձին ծերության կամ հաշմանդամության կամ կերակրողին կորցնելու դեպքում նպաստ չի նշանակվում և չի վճարվում, բացառությամբ երեխաներին նշանակված՝ կերակրողին կորցնելու դեպքում նպաստի:

7. ~~Բնակչության սոցիալական պաշտպանության պետական~~ Սոցիալական պաշտպանության հաստատությունում ~~(մանկատանը)~~ բնակվող երեխային վճարվում է կերակրողին կորցնելու դեպքում նպաստի 50 տոկոսը: Այդ գումարները, մինչև երեխայի 18 տարեկան դառնալը կամ սահմանված կարգով պետական կազմակերպությունից հեռանալը, հաշվառվում և վճարվում են «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

8. Սույն հոդվածով սահմանված նպաստը վճարվում է կենսաթոշակի համար սահմանված կարգով (այդ թվում՝ լիազորագրով):

8.1. Ռազմական ուսումնական հաստատությունում սովորող անձին կերակրողին կորցնելու դեպքում նպաստ նշանակվում և վճարվում է «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

8.2. Ֆունկցիոնալության խորը աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող անձի նպաստ նշանակելու դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվում են «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ ֆունկցիոնալության խորը աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող անձի կենսաթոշակի համար սահմանված կարգով:

8.3. Հաշմանդամություն ունեցող երեխա ճանաչված անձի հաշմանդամության նպաստը նշանակվում և վճարվում է նաև այդ նպաստն օրենքով սահմանված կարգով ստանալու իրավունք ունեցող ծնողի՝ նպաստը մյուս ծնողին վճարելու մասին նոտարական կարգով վավերացված համաձայնության հիման վրա, եթե գրավոր դիմումը և համաձայնությունը ներկայացվել են տարածքային կենտրոն:

9. Սույն օրենքի 29-31-րդ հոդվածներով սահմանված նպաստների իրավունք ունեցող անձն ունի այդ նպաստներից մեկն ստանալու իրավունք՝ իր ընտրությամբ:

(32-րդ հոդվածը խմբ., լրաց. 01.12.14 ՀՕ-207-Ն, 16.12.16 ՀՕ-223-Ն, փոփ. 08.12.22 ՀՕ-529-Ն)

(08.12.22 ՀՕ-529-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Հոդված 32.1. Ծերության նպաստ, հաշմանդամության նպաստ, կերակրողին կորցնելու դեպքում նպաստ նշանակելու ժամկետները

1. Ծերության նպաստը նշանակվում է այդ նպաստի իրավունք տվող տարիքը (65 տարեկանը) լրանալու օրվանից, եթե նպաստ նշանակելու դիմումը ներկայացվել է այդ օրվանից հետո՝ երեք ամսվա ընթացքում:

2. Հաշմանդամության նպաստը նշանակվում է անձի ֆունկցիոնալությունը գնահատող հանձնաժողովի կողմից հաշմանդամություն ունեցող անձ ճանաչվելու օրվանից, եթե նպաստ նշանակելու դիմումը ներկայացվել է այդ օրվանից հետո՝ երեք ամսվա ընթացքում:

3. Կերակրողին կորցնելու դեպքում նպաստը նշանակվում է կերակրողի մահվան օրվանից, եթե նպաստ նշանակելու դիմումը ներկայացվել է կերակրողի մահվան օրվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում:

3.1. Եթե անձը ծերության, հաշմանդամության կամ կերակրողին կորցնելու դեպքում նպաստ ստանալու իր իրավունքը դադարելու օրվա դրությամբ ունի այդ նպաստներից որևէ տեսակի նպաստի իրավունք և այլ տեսակի նպաստ նշանակելու դիմումը ներկայացրել է նպաստ ստանալու իր իրավունքը դադարելու օրվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում, ապա այլ տեսակի նպաստը նշանակվում է նպաստ ստանալու իրավունքը դադարելու օրվանից:

4. Սույն հոդվածի 1-3.1-ին մասերում նշված ժամկետներից հետո դիմելու դեպքում նպաստը նշանակվում է դիմելու օրվանից:

(32.1-ին հոդվածը լրաց. 01.12.14 ՀՕ-207-Ն, լրաց., փոփ. 01.07.19 ՀՕ-100-Ն, փոփ. 08.12.22 ՀՕ-529-Ն)

(08.12.22 ՀՕ-529-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Հոդված 33. Ծերության նպաստ, հաշմանդամության նպաստ, կերակրողին կորցնելու դեպքում նպաստ ստանալու իրավունքը դադարեցնելը և վերականգնելը

1. Ծերության նպաստ կամ հաշմանդամության նպաստ կամ կերակրողին կորցնելու դեպքում նպաստ ստանալու իրավունքը դադարեցվում է՝

1) նպաստառուի մահվան, ինչպես նաև նրան մահացած կամ անհայտ բացակայող ճանաչելու դեպքում.

2) նպաստառուի հաշմանդամության ժամկետը լրանալու դեպքում.

3) կերակրողին կորցնելու կամ կերակրողի (որի զոհվելու (մահանալու) դեպքում նշանակվել է կերակրողին կորցնելու դեպքում նպաստ) զոհվելու (մահանալու) հիմքով «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքի համաձայն հատուցման գումար վճարելու (շահառու հանդիսանալու) դեպքում նշանակված նպաստի սահմանված ժամկետը լրանալու կամ այդ նպաստի իրավունքը կորցնելու դեպքում.

3.1) սույն օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված կարգով նպաստ նշանակելուց հետո նպաստառուի աշխատելու դեպքում.

3.2) սույն օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով սահմանված կարգով նպաստ նշանակելուց հետո մահացած կերակրողի 14 տարին չլրացած երեխայի խնամքով զբաղված անձի՝ Հայաստանի Հանրապետության բնակության վայրի (հասցեի) համատեղ հաշվառումից դուրս գալու դեպքում.

4) օտարերկրյա քաղաքացի կամ քաղաքացիություն չունեցող նպաստառուի՝ Հայաստանի Հանրապետությունում բնակվելու իրավունքի ժամկետը լրանալու կամ բնակվելու իրավունքը դադարելու կամ Հայաստանի Հանրապետության բնակության վայրի (հասցեի) հաշվառումից դուրս գալու դեպքում.

5) նպաստառուի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու դեպքում.

6) Հայաստանի Հանրապետության երկքաղաքացի նպաստառուի՝ մշտապես կամ առավելապես օտարերկրյա պետությունում բնակություն հաստատելու դեպքում (Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում օտարերկրյա պետությունում իր բնակության վայրի հասցեով հաշվառվելու դեպքում), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության բնակության վայրի (հասցեի) հաշվառումից դուրս գալու դեպքում.

7) օտարերկրյա քաղաքացի նպաստառուին այլ պետությունում կենսաթոշակ նշանակելու կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացուն և Հայաստանի Հանրապետության երկքաղաքացուն Հայաստանի Հանրապետության հետ կենսաթոշակային ապահովության բնագավառում միջազգային պայմանագիր կնքած պետությունում կենսաթոշակ նշանակելու դեպքում.

8) նպաստի իրավունքը կորցնելու կամ նպաստի գործում կեղծ (ոչ հավաստի) փաստաթղթեր հայտնաբերելու դեպքում.

9) նպաստառուին կամ նրա փոխարեն նպաստն ստանալու իրավունք ունեցող անձին 12 ամիս անընդմեջ նպաստ չվճարելու դեպքում.

10) նպաստ ստանալու իրավունքը դադարեցնելու մասին նոտարական կարգով վավերացված հայտարարությունը տարածքային կենտրոն ներկայացնելու դեպքում.

11) նպաստառուին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կենսաթոշակ նշանակելու դեպքում.

12) անձին Հայաստանի Հանրապետության օրենքի խախտմամբ նպաստ նշանակված լինելու դեպքում.

13) անչափահաս կամ խնամակալության տակ գտնվող նպաստառուի՝ տասներկու ամիս անընդմեջ Հայաստանի Հանրապետությունից բացակայելու դեպքում (եթե նպաստը վճարվում է նպաստառուի օրինական ներկայացուցչին):

2. Նպաստ ստանալու իրավունքը դադարեցվում է այդ հանգամանքներն առաջանալու ամսին հաջորդող ամսվա 1-ից, բացառությամբ սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում նշված դեպքի՝ հաշմանդամության ժամկետը լրանալու օրվանից, ինչպես նաև 11-րդ կետում նշված դեպքում՝ կենսաթոշակ նշանակելու օրվանից:

3. Առկա (ցերեկային) ուսուցմամբ ուսումնական հաստատությունում սովորող անձի՝ կերակրողին կորցնելու դեպքում նպաստ ստանալու իրավունքը դադարեցվում է տվյալ տարվա հուլիսի 1-ից:

4. Նպաստ ստանալու իրավունքը վերականգնվում է՝

1) նպաստառուին մահացած կամ անհայտ բացակայող ճանաչելու մասին դատարանի վճիռը վերացնելու վերաբերյալ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռը ներկայացնելու և գրավոր դիմելու դեպքում՝ նպաստ ստանալու իրավունքը դադարեցնելու օրվանից.

2) 18 տարին լրացած անձի՝ կերակրողին կորցնելու դեպքում նպաստ ստանալու իրավունքը դադարեցնելու օրվանից, եթե ուսման մասին ուսումնական հաստատությունից տեղեկանք է ներկայացվում այդ օրվանից հետո՝ 6 ամսվա ընթացքում, իսկ այդ ժամկետից հետո տեղեկանք ներկայացնելու դեպքում՝ գրավոր դիմելու օրվանից.

3) հաշմանդամության ժամկետը լրանալուց հետո՝ երեք ամսվա ընթացքում, կրկին հաշմանդամություն ունեցող անձ ճանաչվելու դեպքում՝ դադարեցնելու օրվանից, իսկ հաշմանդամության ժամկետը լրանալուց հետո՝ տասներկու ամսվա ընթացքում, հաշմանդամություն ունեցող անձ ճանաչվելու դեպքում՝ հաշմանդամություն ունեցող անձ ճանաչվելու օրվանից՝ անձի ֆունկցիոնալությունը գնահատող հանձնաժողովի կողմից ստացված՝ անձին հաշմանդամություն ունեցող անձ ճանաչելու մասին անձի ֆունկցիոնալության գնահատման որոշման քաղվածքի հիման վրա.

3.1) հաշմանդամության ժամկետը լրանալուց տասներկու ամիս հետո հաշմանդամություն ունեցող անձ ճանաչվելու դեպքում՝ հաշմանդամություն ունեցող անձ ճանաչվելու օրվանից, եթե դիմումը ներկայացվել է հաշմանդամություն ունեցող անձ ճանաչվելուց հետո՝ երեք ամսվա ընթացքում, իսկ այդ ժամկետից հետո դիմելու դեպքում՝ դիմելու օրվանից.

4) սույն հոդվածի 1-ին մասի 9-րդ, 13-րդ կետերով նախատեսված հիմքերով նպաստ ստանալու իրավունքը դադարեցված լինելու դեպքում՝ գրավոր դիմելու և անհրաժեշտ փաստաթղթերը նպաստառուի (անչափահաս կամ խնամակալության տակ գտնվող նպաստառուի դեպքում՝ նրա օրինական ներկայացուցչի) կողմից անձամբ ներկայացվելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից.

5) սույն հոդվածի 1-ին մասի 3.1-ին կետով նախատեսված հիմքով նպաստ ստանալու իրավունքը դադարեցված լինելու դեպքում՝ աշխատանքից ազատվելուց հետո՝ երեք ամսվա ընթացքում, գրավոր դիմելու և անհրաժեշտ փաստաթուղթ ներկայացնելու դեպքում՝ ազատվելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից, իսկ այդ ժամկետը լրանալուց հետո դիմելու դեպքում՝ գրավոր դիմելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից.

6) սույն հոդվածի 1-ին մասի 3.2-րդ կետով նախատեսված հիմքով նպաստ ստանալու իրավունքը դադարեցված լինելու դեպքում՝ անձի՝ մահացած կերակրողի 14 տարին չլրացած երեխայի հետ Հայաստանի Հանրապետության բնակության վայրի (հասցեի) համատեղ հաշվառումից դուրս գալու ամսվանից հետո՝ երեք ամսվա ընթացքում, կրկին Հայաստանի Հանրապետության բնակության վայրի հասցեով համատեղ հաշվառվելու և գրավոր դիմելու դեպքում՝ նպաստ ստանալու իրավունքը դադարեցնելու օրվանից, իսկ

նշված ժամկետից հետո հաշվառվելու դեպքում՝ գրավոր դիմելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից.

7) օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի՝ Հայաստանի Հանրապետությունում բնակվելու իրավունքի ժամկետը լրանալու ամսվանից հետո՝ երեք ամսվա ընթացքում, կրկին բնակվելու իրավունք ձեռք բերելու մասին փաստաթուղթը ներկայացնելու դեպքում՝ բնակության իրավունք ձեռք բերելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից, իսկ այդ ժամկետից հետո փաստաթուղթը ներկայացնելու դեպքում՝ գրավոր դիմելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից.

8) օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի՝ Հայաստանի Հանրապետության բնակության վայրի (հասցեի) հաշվառումից դուրս գալու ամսվանից հետո՝ երեք ամսվա ընթացքում, կրկին Հայաստանի Հանրապետության բնակության վայրի հասցեով հաշվառվելու և գրավոր դիմելու դեպքում՝ հաշվառվելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից, իսկ այդ ժամկետից հետո հաշվառվելու դեպքում՝ գրավոր դիմելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից.

9) սույն հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքով նպաստ ստանալու իրավունքը դադարեցվելուց հետո՝ երեք ամսվա ընթացքում, Հայաստանի Հանրապետության երկքաղաքացու՝ կրկին Հայաստանի Հանրապետության բնակության վայրի հասցեով հաշվառվելու և գրավոր դիմելու դեպքում՝ հաշվառվելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից, իսկ այդ ժամկետից հետո հաշվառվելու դեպքում՝ գրավոր դիմելու ամսվան հաջորդող ամսվա 1-ից.

10) նպաստ ստանալու իրավունքը «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքի համաձայն հատուցման գումար վճարելու (շահառու հանդիսանալու) հիմքով դադարեցված լինելու դեպքում՝ հատուցման գումար վճարելը դադարեցնելու օրվանից, եթե այդ մասին տեղեկանքը և գրավոր դիմումը ներկայացվում են այդ օրվանից հետո՝ 6 ամսվա ընթացքում, իսկ այդ ժամկետից հետո դիմելու դեպքում՝ գրավոր դիմելու օրվանից:

5. Նպաստ ստանալու իրավունքը վերականգնվելու դեպքում տվյալ նպաստի իրավունքը չի վերանայվում:

6. Հաշմանդամության ժամկետը լրանալուց հետո՝ 3 ամսվա ընթացքում, կրկին հաշմանդամություն ունեցող անձ ճանաչվելու դեպքում նպաստ ստանալու իրավունքը վերականգնելիս նպաստ ստանալու իրավունքը դադարեցնելու օրվան հաջորդող ժամանակահատվածի համար նպաստը վճարվում է ֆունկցիոնալության սահմանափակման նոր աստիճանի համար հաշվարկված չափով:

7. Նպաստ ստանալու իրավունքը վերականգնվում է, եթե նպաստառուն, ըստ Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալների, հաշվառված է Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեում, իսկ նպաստը նրա օրինական ներկայացուցչին վճարվելու դեպքում՝ նաև եթե անչափահաս կամ խնամակալության տակ գտնվող նպաստառուն գտնվում է Հայաստանի Հանրապետությունում:

8. Հաշմանդամություն ունեցող երեխա ճանաչված անձի հաշմանդամության նպաստ ստանալու իրավունքը վերականգնվում, նպաստ վճարելը վերսկսվում և չվճարված նպաստի գումարը վճարվում է նաև սույն օրենքի 32-րդ հոդվածի 8.3-րդ մասով սահմանված՝ ծնողի համաձայնության հիման վրա:

9. Ուսումնական հաստատությունում սովորող անձի՝ կերակրողին կորցնելու դեպքում նպաստ ստանալու իրավունքը վերականգնվում, նպաստ վճարելը վերսկսվում և չվճարված նպաստի գումարը վճարվում է «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

(33-րդ հոդվածը խմբ., լրաց. 01.12.14 ՀՕ-207-Ն, 16.12.16 ՀՕ-223-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-239-Ն, 01.07.19 ՀՕ-100-Ն, լրաց., փոփ. 04.05.22 ՀՕ-114-Ն, խմբ., փոփ. 08.12.22 ՀՕ-529-Ն)

(08.12.22 ՀՕ-529-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

(հոդվածը 11.09.25 ՀՕ-308-Ն օրենքի փոփոխության մասով ուժի մեջ է մտնում 2026 թվականի սեպտեմբերի 1-ից)

Հոդված 34. Ծերության նպաստի, հաշմանդամության նպաստի, կերակրողին կորցնելու դեպքում նպաստի չվճարված գումարը վճարելը

1. Ծերության կամ հաշմանդամության կամ կերակրողին կորցնելու դեպքում նպաստ ստանալու իրավունք ունեցող անձին չվճարված նպաստի գումարը վճարվում է դիմելու կամ նպաստ ստանալու իրավունքը վերականգնելու համար հիմք համարվող տեղեկատվությունը ստացվելու ամսվան նախորդող մեկ տարվա այն ժամանակահատվածի համար, որի ընթացքում անձը նպաստ ստանալու իրավունք է ունեցել:

2. Նպաստառուի մահվան դեպքում չվճարված նպաստի գումարը վճարվում է մահացածի ամուսնուն կամ 14 տարեկան և դրանից բարձր տարիքի անչափահաս երեխային՝ անկախ նպաստառուի մահվան օրվա դրությամբ նրա հետ համատեղ նույն վայրում (հասցեում) հաշվառված լինելու հանգամանքից, իսկ ընտանիքի այլ անդամին՝ եթե նա, ըստ Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալների, նպաստառուի մահվան օրվա դրությամբ նրա հետ համատեղ հաշվառված է եղել նույն վայրում (հասցեում): Անչափահաս կամ խնամակալության տակ գտնվող նպաստառուի մահվան դեպքում չվճարված նպաստի գումարը վճարվում է նաև նրա օրինական ներկայացուցչին՝ ծնողին, որդեգրողին կամ խնամակալին:

3. Նպաստառուի մահվան դեպքում չվճարված նպաստի գումարը վճարվում է, եթե դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը տարածքային կենտրոն են ներկայացվում նպաստառուի մահվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում:

4. Նպաստառուի մահվան դեպքում չվճարված նպաստի գումարը վճարելու համար վեցամսյա ժամկետում չդիմելու դեպքում նպաստառուի մահվան պատճառով չվճարված նպաստի գումարը ենթակա է ժառանգման:

(34-րդ հոդվածը փոփ. 16.12.16 ՀՕ-223-Ն)

Հոդված 35. Նպաստառուի մահվան դեպքում թաղման նպաստը վճարելը

1. Նպաստառուի կամ անապահովության նպաստ ստանալու իրավունք ունեցող ընտանիքի անդամի մահվան դեպքում կամ հաշմանդամության նպաստի իրավունք ունեցող անձի ֆունկցիոնալության կրկնակի գնահատման ժամկետը լրանալուց հետո՝ երեք ամսվա ընթացքում, կրկնակի գնահատման չներկայանալու և մահանալու դեպքում կամ այդ ժամկետում կրկնակի գնահատման ներկայանալու կամ վերագնահատման համար դիմելու, սակայն մինչև իր վերաբերյալ ֆունկցիոնալության գնահատման որոշում կայացվելը մահանալու դեպքում այդ անձի հուղարկավորությունը կատարած անձին նշանակվում և վճարվում է թաղման նպաստ:

2. Ֆունկցիոնալության առաջնակի գնահատմամբ հաշմանդամություն ունեցող անձ ճանաչված, հաշմանդամության նպաստի իրավունք ունեցող, բայց նպաստը նշանակելու համար չդիմած անձի մահվան դեպքում հուղարկավորությունը կատարած անձին նշանակվում և վճարվում է թաղման նպաստ, եթե հաշմանդամություն ունեցող անձը մահացել է իր վերաբերյալ ֆունկցիոնալության գնահատման որոշումը կայացվելու օրվանից հետո՝ երեք ամսվա ընթացքում:

3. ~~Բնակչության ս~~Սոցիալական պաշտպանության հաստատությունում բնակվող նպաստառուի մահվան դեպքում թաղման նպաստ չի վճարվում, եթե հուղարկավորությունը կատարում է այդ հաստատությունը:

4. Թաղման նպաստը նշանակվում է, եթե հուղարկավորությունը կատարվել է Հայաստանի Հանրապետությունում, կամ նպաստառուն մահացել է Հայաստանի Հանրապետությունում: Թաղման նպաստը նշանակվում է գրավոր դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը անձի մահվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում, տարածքային կենտրոն ներկայացնելու դեպքում:

5. Թաղման նպաստ նշանակելու և վճարելու կարգը, նշանակելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը և թաղման նպաստի չափը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Թաղման նպաստը վճարվում է անկանխիկ եղանակով՝ նշանակելու ամսվան հաջորդող ամսվա նպաստների վճարման համար սահմանված ժամկետից ոչ ուշ:

6. Թաղման նպաստի սահմանվող չափը չի կարող պակաս լինել նախկին չափից:

(35-րդ հոդվածը լրաց. 01.07.19 ՀՕ-100-Ն, 04.05.22 ՀՕ-114-Ն, խմբ. 08.12.22 ՀՕ-529-Ն, լրաց. 24.10.24 ՀՕ-407-Ն)

(08.12.22 ՀՕ-529-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

(24.10.24 ՀՕ-407-Ն օրենքն ունի անցումային դրույթներ)

Հոդված 36. Քրեակատարողական հիմնարկում պատիժը կրող անձին ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստ նշանակելը և վճարելը

1. Քրեակատարողական հիմնարկում պատիժը կրող անձին ծերության, հաշմանդամության, կերակրողին կորցնելու դեպքում նպաստ նշանակվում և վճարվում է կենսաթոշակի համար սահմանված կարգով:

~~ԳԼՈՒԽ 8.1~~

~~*(գլուխը լրաց. 04.03.20 ՀՕ-137-Ն)*~~

~~**Հոդված 36.1. Խնամակալության նպաստ ստանալու իրավունքը և տրամադրման հիմքը**~~

~~1. Խնամակալության նպաստ ստանալու իրավունք ունի տասնչորս տարին չլրացած անչափահասների նկատմամբ խնամակալ նշանակված անձը, որը հաշվառված է խնամակալության նպաստի համակարգում: Խնամակալ նշանակված անձին հաշվառում են խնամակալության նպաստի համակարգում Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած չափորոշիչներին համապատասխան:~~

~~2. Խնամակալության նպաստ ստանալու իրավունքը ծագում է դիմողի դիմելու օրվա դրությամբ, և խնամակալության նպաստը վճարվում է դիմելու օրվա ամսվան հաջորդող ամսից:~~

~~**Հոդված 36.2 Խնամակալության նպաստ ստանալու իրավունքի դադարեցման հիմքերը**~~

~~1. Խնամակալության նպաստ ստանալու իրավունքը դադարեցվում է՝~~

~~1) խնամակալության նպաստի համակարգում հաշվառումից դուրս գալու դեպքում.~~

~~2) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած խնամակալության նպաստ ստանալու իրավունք տվող այլ պայմանների վերացման դեպքում.~~

~~3) դիմողի կողմից սույն օրենքով սահմանված ժամկետում տարածքային կենտրոն անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացնելու դեպքում.~~

~~4) խնամակալության նպաստն անընդմեջ երեք ամիս անհարգելի պատճառով չստանալու դեպքում.~~

~~5) խնամակալության նպաստ ստացողի՝ խնամակալության համակարգում կրկնակի հաշվառման դեպքում:~~

~~2. Խնամակալության նպաստ ստանալու իրավունքը դադարեցվում է սույն հոդվածի 1-ին մասում նշված հիմքերի հայտնաբերման օրվան հաջորդող ամսվա 1-ից:~~

ԳԼՈՒԽ 9

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՒՅՆ ՕՐԵՆՔԻ ԽԱԽՏՄԱՆ ՀԱՄԱՐ

Հոդված 37. Քաղաքացիների պատասխանատվությունը

1. Պետական նպաստ ստացող ընտանիքի (քաղաքացու) ներկայացրած փաստաթղթերում կամ այլ մարմիններից Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված տվյալներում նպաստի իրավունք տվող ոչ հավաստի կամ կեղծ տեղեկությունների հայտնաբերման դեպքում նպաստի վճարումը դադարեցվում է հայտնաբերման ամսից:

1.1. Պետական նպաստ ստացող անձը (ընտանիքի անդամը) պարտավոր է՝

1) տարածքային կենտրոն ներկայացնել իրեն (ընտանիքին) վերաբերող հավաստի տվյալներ.

2) տարածքային կենտրոնին տեղեկացնել այն հանգամանքների մասին, որոնց առկայությունը կարող է հանգեցնել պետական նպաստի չափը փոփոխելուն կամ դրա վճարումը դադարեցնելուն:

~~1.2. Սույն հոդվածի 1.1-ին մասով սահմանված պարտականությունները չկատարելու հետևանքով պետական նպաստ ստացող անձին կամ ընտանիքին ավել վճարված պետական նպաստի գումարները ենթակա են հետգանձման՝ սույն օրենքով սահմանված կարգով:~~

1.2. Բացառությամբ սույն հոդվածի 2.1-ին և 2.3-րդ մասերում նշված դեպքերի, սխալմամբ (Հայաստանի Հանրապետության օրենքի խախտմամբ), այդ թվում՝ սույն հոդվածի 1.1-ին մասով սահմանված պարտականությունները չկատարելու հետևանքով պետական նպաստ ստացող անձին կամ ընտանիքին ավել վճարված պետական նպաստի գումարները ենթակա են հետգանձման կամ վերադարձման կամ դատական կարգով բռնագանձման՝ սույն օրենքով սահմանված կարգով, եթե նպաստի՝ ավել վճարված լինելու հանգամանքը հայտնաբերվել է նպաստը նշանակելուց հետո՝ 12 ամսվա ընթացքում:

2. ~~Ավել վճարված գումարները, բացառությամբ սույն հոդվածի 2.1-ին և 2.3-րդ մասերում նշված դեպքերի, ամբողջությամբ ենթակա են~~ Սույն հոդվածի 1.2-րդ մասում նշված դեպքում ավել վճարված նպաստի գումարներն ամբողջությամբ ենթակա են հետգանձման կամ վերադարձման կամ դատական կարգով բռնագանձման, սակայն ավել գումարների վճարման հանգամանքի հայտնաբերման ամսվան նախորդած 12 ամիսների ընթացքում ստացած ավել գումարի չափից ոչ ավելի: Ավել վճարված նպաստի գումարները ժամանակացույցի հիման վրա կարող են վերադարձվել նաև՝

1) նպաստ նշանակող տարածքային կենտրոնի այն աշխատակցի կողմից, որի մեղքով (գործողությունների կամ անգործության արդյունքում) վճարվել են նպաստի գումարները.

2) այն անձի կողմից, որին նշանակվել (վճարվել) է նպաստը, նրա օրինական ներկայացուցչի կողմից, նրանց փոխարեն նպաստն ստանալու՝ օրենքով այդ իրավունքն ունեցող անձի կողմից կամ այլ անձի կողմից:

2.1. Ժամանակավոր անաշխատունակության և վարձու աշխատողի, ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձի մայրության նպաստների ավել վճարված գումարների հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

~~2.2. Սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով սահմանված նպաստի, 23.2-րդ հոդվածում նշված չաշխատող անձանց տրվող մայրության նպաստի ավել վճարված գումարները ենթակա են վերադարձման, եթե նպաստը նշանակվել է դիմումին կից սխալ տեղեկություններով փաստաթղթեր ներկայացնելու հիման վրա, և խախտումը հայտնաբերվել է նպաստը նշանակելուց հետո՝ 12 ամսվա ընթացքում:~~

2.2. Չաշխատող անձանց տրվող մայրության նպաստի ավել վճարված գումարները ենթակա են հետգանձման կամ վերադարձման կամ դատական կարգով բռնագանձման նաև այն դեպքում, երբ նպաստը նշանակելուց հետո՝ 36 ամսվա ընթացքում անձը մայրության նպաստի իրավունք է ձեռք բերում «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով: Այս դեպքում չաշխատող անձանց տրվող մայրության նպաստի ավել վճարված գումարները կարող են նաև հաշվանցվել «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով վճարված (վճարման ենթակա) մայրության նպաստից:

2.3. Սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 7-9-րդ կետերով սահմանված նպաստներից պահումներ կատարելու, այդ նպաստների ավել վճարված գումարները հետ գանձելու (վերադարձնելու, բռնագանձելու) հետ կապված հարաբերությունները կարգավորվում են կենսաթոշակի ավել վճարված գումարները հետ գանձելու (Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վերականգնելու, բռնագանձելու) համար «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով: Սույն մասում նշված նպաստների՝ ավել վճարված գումարների չափում չեն հաշվարկվում այն գումարները, որոնք վճարվել են մինչև 2017 թվականի հունվարի 1-ը, բացառությամբ այն դեպքի, երբ նպաստի գումարը վճարվել է՝

1) նպաստ ստանալու իրավունք ունեցող անձի մահվան ամսվան հաջորդող ամիսների համար կամ Հայաստանի Հանրապետության հետ կենսաթոշակային ապահովության բնագավառում միջազգային պայմանագիր կնքած պետությունում նպաստ ստանալու իրավունք ունեցող անձին կենսաթոշակ նշանակելու ամսվան հաջորդող ամիսների համար կամ

2) Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված արարքի հետևանքով, որը հաստատված է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

Սույն մասում նշված նպաստ ստանալու իրավունքը սույն օրենքով սահմանված կարգով չդադարեցնելու հետևանքով սխալմամբ (Հայաստանի Հանրապետության օրենքի խախտմամբ) ավել վճարված նպաստի գումարների չափը հաշվարկելիս եթե նպաստառուն նպաստի գումարն ավել վճարված ժամանակահատվածում ունի սույն մասում նշված այլ նպաստի կամ պետական բյուջեից ֆինանսավորվող կենսաթոշակի իրավունք, ապա համարվում է, որ նպաստառուն այլ նպաստ կամ կենսաթոշակ նշանակելու դիմում է ներկայացրել այն օրը (բայց ոչ շուտ, քան այլ նպաստի կամ կենսաթոշակի իրավունք ձեռք բերելու օրը), երբ նպաստ ստանալու իրավունքը պետք է դադարեցվեր: Այս դեպքում նպաստ նշանակելու դիմում ներկայացնելու օրվանից մինչև

նպաստ ստանալու իրավունքը փաստացի դադարեցնելու օրն ընկած ժամանակահատվածի համար հաշվարկված այլ նպաստի կամ կենսաթոշակի գումարը համարվում է տարածքային կենտրոնի մեղքով չվճարված նպաստի գումար և հաշվանցվում է ավել վճարված նպաստի գումարներից:

2.4. Սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված նպաստի, ~~23.2-րդ հոդվածում նշված~~ չաշխատող անձանց տրվող մայրության նպաստի ավելի վճարված գումարները կարող են դատական կարգով բռնագանձվել գործատուից, եթե այդ գումարները վճարվել են «Եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված՝ գրանցման հայտը ներկայացնելու ժամկետների խախտման հետևանքով (այդ թվում՝ եթե գրանցման հայտը ներկայացվել է «Եկամտային հարկի, շահութահարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված՝ տեղեկատվական բազայում ներառված տվյալներում փոփոխություններ կատարելու նպատակով):

2.5. Չաշխատող անձին սխալմամբ (Հայաստանի Հանրապետության օրենքի խախտմամբ) նշանակված և վճարված մայրության նպաստի գումարը ենթակա է հաշվանցման «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նշանակված մայրության նպաստից:

3. Սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ ~~և 5-րդ~~ , 5-րդ, 6.2-րդ և 10-րդ կետերով սահմանված նպաստների, ~~23.2-րդ հոդվածում նշված~~ չաշխատող անձանց տրվող մայրության նպաստի ավել վճարված գումարները կարող են վերադարձվել քաղաքացու հետ գրավոր համաձայնությամբ կազմված ժամանակացույցով: Սույն մասում նշված դեպքերում ժամանակացույց կազմելու կարգը հաստատում է լիազոր մարմինը:

4. Սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերով սահմանված նպաստների՝ ավելի վճարված գումարների վերադարձման ժամանակացույց կազմելու կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

5. Լիազոր նշանակող մարմնի մեղքով կամ տեղեկատվական շտեմարանների տվյալների՝ նպաստառուից անկախ տվյալների ճշգրտման արդյունքով կամ շտեմարանների միջև տեղեկատվության (տվյալների) փոխանակման ընթացքում առաջացած տեխնիկական վրիպակի պատճառով սույն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ, 5-րդ, 6.2-րդ, 10-րդ կետերով սահմանված նպաստների, 23.2-րդ հոդվածում նշված չաշխատող անձանց տրվող մայրության նպաստի չվճարված պետական նպաստի գումարը վճարվում է առանց ժամկետի սահմանափակման:

(37-րդ հոդվածը լրաց., փոփ. 16.12.16 ՀՕ-223-Ն, լրաց. 21.12.17 ՀՕ-288-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-239-Ն, լրաց. 01.07.19 ՀՕ-100-Ն, 25.06.20 ՀՕ-340-Ն, փոփ. 09.06.22 ՀՕ-229-Ն, լրաց., փոփ., խմբ. 24.10.24 ՀՕ-407-Ն)

(24.10.24 ՀՕ-407-Ն օրենքն ունի անցումային դրույթներ)

Հոդված 38. Պաշտոնատար անձանց պատասխանատվությունը

1. Սույն օրենքը խախտող պաշտոնատար անձինք պատասխանատվություն են կրում օրենքով սահմանված կարգով:

Գ Լ ՈՒ Խ 10

ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 39. Օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2014 թվականի հունվարի 1-ից:
2. Մինչև պետական նպաստների իրավունքի նորմեր պարունակող իրավական ակտերը սույն օրենքին համապատասխանեցնելը դրանք կիրառվում են այնքանով, որքանով չեն հակասում սույն օրենքին:
3. Սույն օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից ուժը կորցրած ճանաչել «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության 2005 թվականի հոկտեմբերի 24-ի ՀՕ-205-Ն օրենքը:
4. Սույն օրենքի 24-26-րդ հոդվածների դրույթները տարածվում են այն դեպքերի վրա, երբ երեխան ծնվել է 2014 թվականի հունվարի 1-ին և դրանից հետո: Եթե երեխան ծնվել է մինչև 2014 թվականի հունվարի 1-ը, ապա երեխայի ծննդյան միանվագ նպաստը նշանակվում և վճարվում է մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը սահմանված կարգով:
5. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո մինչև 2014 թվականի հունվարի 1-ը «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով նշանակված ծերության սոցիալական, հաշմանդամության սոցիալական և կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական կենսաթոշակները (անկախ կենսաթոշակ ստանալու իրավունքը և կենսաթոշակ վճարելը դադարեցված լինելուց) վերանվանվում են համապատասխանաբար ծերության, հաշմանդամության և կերակրողին կորցնելու դեպքում նպաստի՝ անկախ սույն օրենքով սահմանված ծերության սոցիալական, հաշմանդամության սոցիալական և կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական նպաստի իրավունքից:
6. Սույն օրենքով սահմանված կարգով ծերության, հաշմանդամության և կերակրողին կորցնելու դեպքում նպաստ ստանալու իրավունքը վերականգնելու, վճարելը վերսկսելու դեպքում (այդ թվում՝ դիմումի հիման վրա) «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով նշանակված ծերության սոցիալական, հաշմանդամության սոցիալական և կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական կենսաթոշակի իրավունքը չի վերանայվում: Այս դեպքում «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ծերության սոցիալական, հաշմանդամության սոցիալական և կերակրողին կորցնելու դեպքում սոցիալական կենսաթոշակ ստանալու իրավունքը դադարեցնելու օրը համարվում է ծերության, հաշմանդամության և կերակրողին կորցնելու դեպքում նպաստ

ստանալու իրավունքը դադարեցնելու օր, իսկ չվճարված ծերության, հաշմանդամության և կերակրողին կորցնելու դեպքում նպաստի գումարում հաշվառվում է նաև դիմելու ամսվան նախորդող մեկ տարվա այն ժամանակահատվածի չվճարված սոցիալական կենսաթոշակի գումարը, որի ընթացքում անձը ունեցել է «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ սոցիալական կենսաթոշակ ստանալու իրավունք:

7. Օտարերկրյա քաղաքացուն, անկախ հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու ժամանակահատվածի առաջին օրվա դրությամբ առնվազն երեք տարի անընդմեջ Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով հաշվառված լինելու հանգամանքից, սույն օրենքով սահմանված կարգով նշանակվում և վճարվում է չաշխատող անձի մայրության նպաստ, եթե հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու ժամանակահատվածի առաջին օրը մինչև 2017 թվականի հունվարի 1-ն է:

8. Եթե նոր ծնված երեխան ծնվել է մինչև 2017 թվականի հունվարի 1-ը, ապա երեխայի ծննդյան միանվագ նպաստը սույն օրենքով սահմանված կարգով նշանակվում և վճարվում է նաև՝

1) նոր ծնված երեխայի ծննդի պետական գրանցումն օտարերկրյա պետության իրավասու մարմնի կողմից իրականացվելու դեպքում՝ անկախ ծնողի և նոր ծնված երեխայի՝ դիմելու օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետությունում գտնվելու հանգամանքից.

2) օտարերկրյա քաղաքացուն՝ անկախ երեխայի ծննդյան օրվա դրությամբ առնվազն երեք տարի անընդմեջ Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով հաշվառված լինելու հանգամանքից:

9. Խնամքի նպաստը վճարվում է անկանխիկ կամ կանխիկ եղանակով՝ դիմումի հիման վրա, եթե նպաստը նշանակվել է՝

1) Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքներում՝ մինչև 2021 թվականի հունվարի 1-ը

2) այլ քաղաքներում (բացառությամբ սույն մասի 1-ին կետում նշված քաղաքների)՝ մինչև 2021 թվականի հուլիսի 1-ը

3) 1000 և ավելի բնակիչ ունեցող գյուղերում՝ մինչև 2022 թվականի հուլիսի 1-ը

4) մինչև 1000 բնակիչ ունեցող գյուղերում՝ մինչև 2023 թվականի հուլիսի 1-ը:

10. Գյուղերի ցանկը, ըստ բնակչության քանակի, հաստատում է Կառավարությունը:

11. Եթե սույն հոդվածի 9-րդ մասում նշված ժամկետներից հետո ներկայացվում է խնամքի նպաստ վճարելը վերսկսելու, խնամքի նպաստ ստանալու իրավունքը վերականգնելու դիմումը, ապա խնամքի նպաստը վճարվում է անկանխիկ եղանակով՝ հաշվի առնելով սույն օրենքի 28-րդ հոդվածի 8-րդ և 12-րդ մասերով նախատեսված բացառությունները:

12. Մինչև սույն հոդվածի 9-րդ մասում նշված ժամկետները նշանակված խնամքի նպաստը կանխիկ եղանակով վճարվում է մինչև դիմումի (այդ թվում՝ սույն հոդվածի 11-րդ մասում նշված դիմումի) հիման վրա վճարման եղանակը փոխելը: Եթե սույն մասում

նշված դիմումը չի ներկայացվում, ապա նպաստի վճարումը շարունակվում է անկանխիկ եղանակով, Կառավարության սահմանած կարգով ընտրված բանկի միջոցով՝

1) Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքներում՝ 2021 թվականի հուլիսի 1-ից

2) այլ քաղաքներում (բացառությամբ սույն մասի 1-ին կետում նշված քաղաքների)՝ 2022 թվականի հունվարի 1-ից

3) 1000 և ավելի բնակիչ ունեցող գյուղերում՝ 2023 թվականի հունվարի 1-ից

4) մինչև 1000 բնակիչ ունեցող գյուղերում՝ 2024 թվականի հունվարի 1-ից:

13. 2022 թվականի մայիսի 1-ի դրությամբ միաժամանակ կերակրողին կորցնելու դեպքում նպաստ ստանալու իրավունք ունեցող և նույն կերակրողի զոհվելու (մահանալու) հիմքով «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» օրենքի համաձայն հատուցման գումար ստանալու իրավունք ունեցող (շահառու հանդիսացող) անձի՝ կերակրողին կորցնելու դեպքում նպաստի չափը չի փոխվում, որևէ հիմքով նպաստ ստանալու իրավունքը դադարելու դեպքում նպաստ ստանալու իրավունքը չի վերականգնվում:

14. Անապահովության նպաստը և հրատապ օգնությունը վճարվում են կանխիկ կամ անկանխիկ եղանակով՝ դիմումի հիման վրա, եթե անապահովության նպաստը և հրատապ օգնությունը նշանակվել են (նշանակման դիմումը ներկայացվել է)՝

1) քաղաքներում և 1000-ից ավելի բնակիչ ունեցող գյուղերում՝ մինչև 2023 թվականի փետրվարի 1-ը.

2) մինչև 1000 բնակիչ ունեցող գյուղերում՝ մինչև 2023 թվականի հուլիսի 1-ը:

14.1. Մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը հաշմանդամություն ունեցող անձ ճանաչված լինելու մասին անձին տրված տեղեկանքները (վարչական ակտերի քաղվածքները) հիմք են սույն օրենքով նպաստ նշանակելու, նպաստ վճարելու, նպաստ ստանալու իրավունքը դադարեցնելու, նպաստ ստանալու իրավունքը վերականգնելու, թաղման նպաստ նշանակելու համար: Այս դեպքում՝

1) «1-ին խմբի հաշմանդամ անձ» կարգավիճակը հավասարեցվում է անձի ֆունկցիոնալությունը գնահատող հանձնաժողովի որոշմամբ սահմանված «ֆունկցիոնալության խորը աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող անձ» կարգավիճակին.

2) «2-րդ խմբի հաշմանդամ անձ» կարգավիճակը հավասարեցվում է անձի ֆունկցիոնալությունը գնահատող հանձնաժողովի որոշմամբ սահմանված «ֆունկցիոնալության ծանր աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող անձ» կարգավիճակին.

3) «3-րդ խմբի հաշմանդամ անձ» կարգավիճակը հավասարեցվում է անձի ֆունկցիոնալությունը գնահատող հանձնաժողովի որոշմամբ սահմանված «ֆունկցիոնալության միջին աստիճանի սահմանափակումով հաշմանդամություն ունեցող անձ» կարգավիճակին.

4) հաշմանդամության կրկնակի գնահատմանը վերաբերող՝ սույն օրենքի դրույթները կիրառելի են վերափորձաքննության նկատմամբ:

15. Սույն հոդվածի 14-րդ մասում նշված ժամկետներից հետո անապահովության նպաստ և հրատապ օգնություն նշանակելու, վերականգնելու կամ վճարման եղանակը փոխելու կամ վճարող կազմակերպությունը փոխելու դիմում կամ անապահովության նպաստին կամ հրատապ օգնությանն առնչվող ցանկացած գրավոր դիմում ներկայացնելու դեպքում անապահովության նպաստը և հրատապ օգնությունը վճարվում են անկանխիկ եղանակով՝ դիմումում նշված բանկի միջոցով:

16. Մինչև սույն հոդվածի 14-րդ մասում նշված ժամկետները նշանակված անապահովության նպաստը և հրատապ օգնությունը կանխիկ եղանակով վճարվում են մինչև դիմումի (այդ թվում՝ սույն հոդվածի 15-րդ մասում նշված դիմումի) հիման վրա վճարման եղանակը փոխելը: Եթե սույն մասում նշված դիմումը չի ներկայացվում, ապա նպաստի վճարումը շարունակվում է անկանխիկ եղանակով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով ընտրված բանկի միջոցով՝

1) քաղաքներում և 1000-ից ավելի բնակիչ ունեցող գյուղերում՝ 2023 թվականի հուլիսի 1-ից.

2) մինչև 1000 բնակիչ ունեցող գյուղերում՝ 2024 թվականի հունվարի 1-ից:

17.

Հայաստանի Հանրապետության
Նախագահ **Ս. Սարգսյան**

2013 թ. դեկտեմբերի 28
Երևան
ՀՕ-154-Ն